ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՕՐԳԱՆԱԿԱՆ ԵՎ ԴԵՂԱԳՈՐԾԱԿԱՆ ՔԻՄԻԱՅԻ
ԳԻՏԱՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ՇԱԻՆՈՎԱ ՌՈԶԱ ՍԵՐԳԵՅԻ

ԱԶՈՒՆՆԵՐԻ ՀԻՄՔԻ ՎՐԱ ՆՈՐ ՉԿՈՆԴԵՆՍՎԱԾ ԲԻ- և ՏՐԻՑԻԿԼԻԿ ՀԵՏԵՐՈՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՍԻՆԹԵԶԸ և ԴՐԱՆՑ ԱԾԱՆՑՅԱԼՆԵՐԻ ԿԵՆՍԱԲԱՆԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆԸ

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

Բ.00.03 – «Օրգանական քիմիա» մասնագիտությամբ
քիմիական գիտությունների թեկնածուի գիտական
աստիճանի հայցման համար

Գիտական ղեկավար՝
քիմ. գիտ. դոկտոր,
պրոֆեսոր Ա.Փ.Ենգոյան

ԵՐԵՎԱՆ – 2017

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ն Ե Ր Ա Ծ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Աշխատանքի արդիականությունը: Հետերոցիկլիկ միացությունների քիմիայի կարևոր խնդիրներից է համարվում կենսաբանորեն ակտիվ նոր միացությունների որոնումը և սինթեզը, որոնք լայն կիրառություն կունենան դեղագործության, բժշկության, գյուղատնտեսության և արդյունաբերության մեջ:

Գյուղատնտեսական մշակաբույսերի բարձր բերքն ապահովելու գործում կարևոր նշանակություն ունի հանքային պարարտանյութերի և պեստիցիդների օգտագործումը: Վերջիններս պետք է ունենան բարձր արդյունավետություն և ցածր թունականություն, արագ քայքայվեն հողում, ինչպես նաև ստացվեն մատչելի ելանյութերից, որն էլ կապահովի պատրաստուկների նվազագույն ինքնարժեքը և տնտեսական շահույթը:

Պեստիցիդների տևական օգտագործման ժամանակ վնասակար օրգանիզմները դրանց նկատմամբ ձեռք են բերում կայունություն: Բացի այդ, ժամանակակից պեստիցիդներին ներկայացվում են բնապահպանական խիստ պահանջներ, քանի որ կիրառվող պեստիցիդները և դրանց մետաբոլիտները ժամանակի ընթացքում ներգործում են շրջակա միջավայրի վրա և կարող են կուտակվել սննդամթերքի մեջ: Արդիական է ոչ միայն շրջակա միջավայրի համար հնարավորինս անվտանգ քիմիական միջոցների սինթեզն, այլև դրանց արտադրությունն էկոլոգիապես մաքուր եղանակներով՝ ելնելով միջազգային հանրության կողմից ընդունված «Կանաչ քիմիայի» պահանջներից: Այս ամենն անհրաժեշտ է դարձնում պեստիցիդների զինանոցի սիստեմատիկ համալրումն ազդեցության տարբեր մեխանիզմներով օժտված և բնապահպանական պահանջներին բավարարող նոր պատրաստուկներով: Առավել կարևոր է պեստիցիդային ակտիվությամբ օժտված օրգանական միացությունների այնպիսի նոր համակարգերի ածանցյալների հայտնաբերումը, որոնց նկատմամբ վնասակար օրգանիզմները և հիվանդությունների հարուցիչները դեռևս կայունություն ձեռք չեն բերել:

Բնական և սինթետիկ ծագում ունեցող բազմաթիվ պատրատուկների հիմքում ընկած են հինգ- և վեցանդամանի հետերոցիկլիկ օղակ պարունակող կենսաբանորեն ակտիվ միացությունները, որոնք կիրառվում են ինչպես բժշկության, այնպես էլ գյուղա-

տնտեսության մեջ: Պիրիդազինի, պիրիմիդինի, 1,3,5-տրիազինի, պիրազոլի, 1,3,4-օքսադիազոլի, 1,3,4-թիադիազոլի և թիազոլի հիման վրա մշակվել և գյուղատնտեսության մեջ օգտագործվում են բույսերի պաշտպանության բազմաթիվ քիմիական միջոցներ: Բացի այդ, վերջին երկու-երեք տասնամյակներում նկատվում է հետաքրքրության զգալի աճ այդ հետերոցիկլերի ածանցյալների նկատմամբ: Միևնույն ժամանակ գրականության մեջ սակավ են տվյալները պեստիցիդային ակտիվությամբ օժտված այնպիսի միացությունների վերաբերյալ, որոնք իրենց մոլեկուլում պարունակում են միաժամանակ երկու կամ ավել նշված հետերոցիկլերից, մինչդեռ այդ նոր համակարգերում հնարավոր է հայտնաբերել պեստիցիդային ակտիվությամբ օժտված նոր արդյունավետ պատրաստուկներ:

Աշխատանքի նպատակը: Մշակել ազինային (պիրիդազին, պիրիմիդին և տրիազին), պիրազոլային, 1,2,4-տրիազոլային, 1,3,4-օքսադիազոլային, 1,3,4-թիադիազոլային և թիազոլային օղակների համադրությամբ հետերոցիկլիկ համակարգերում նոր ածանցյալների սինթեզի մատչելի եղանակներ, կիրառելով նաև էկոլոգիապես անվտանգ միկրոալիքային ճառագայթման մեթոդը, ուսումնասիրել դրանց փոխարկումները, կառուցվածքային առանձնահատկությունները, կենսաբանական ակտիվությունը, ինչպես նաև սինթեզված միացությունների կառուցվածքի և կենսաբանական ակտիվության միջև եղած կապի օրինաչափությունները, սինթեզել մի քանի ակտիվությունների համադրությամբ օժտված միացություններ:

Գիտական նորույթը: Պիրազոլիլպիրիդազինի և օքսիպիրիդազին-3-ոնի հիմքի վրա մշակվել են անմիջականորեն կամ հետերոատոմի (S,O) միջոցով միացած երկու, երեք և չորս տարբեր հետերոցիկլերի համադրությամբ չկոնդենսված համակարգերի նոր ածանցյալների բարձր ելքերով ընթացող սինթեզի մատչելի եղանակներ: Այդ շարքի որոշ միացությունների սինթեզն իրականացվել է միկրոալիքային ճառագայթների ազդեցության տակ և հաստատվել, որ համեմատած սինթեզի ավանդական եղանակների հետ, այս մեթոդով ռեակցիաներն ընթանում են ավելի բարձր ելքերով և առավել կարճ ժամանակահատվածում:

ՄՄՌ ^{1}H և ^{13}C սպեկտրների տվյալների հիման վրա ապացուցվել է, որ սինթեզված միացությունների շարքերում պիրիդազինի, 1,3,4-օքսադիազոլի, 1,3,4-թիադիազո-

լի և 1,2,4-տրիազոլի ցիկլեր պարունակող թիոքսոածանցյալների ալկիլումն ընթանում է թիոլային ծծմբի ատոմի մոտ: ՄՄՌ ^{1}H և ^{13}C սպեկտրների և ռենտգենկառուցվածքային անալիզի տվյալների հիման վրա հաստատվել է, որ 6-հիդրազինիլպիրիդազինի և 4-հիդրազինիլպիրիմիդինի հետերոցիկլումները հանգեցնում են կոնդենսված տրիազոլոպիրիդազինային և տրիազոլոպիրիմիդինային համակարգերին, իսկ 6-մեթիլ-2-թիոքսո-2,3-դիհիդրոպիրիմիդին-4-ոնի և 3-քլորպենտան-2,4-դիոնի հետ ռեակցիան ընթանում է ծծմբի ատոմի մոտ և ստացված արգասիքի հետերոցիկլումը հանգեցնում է 2-ացետիլ-3,7-դիմեթիլ-5H-թիազոլո[3,2-a]-պիրիմիդին-5-ոնին:

Գործնական նշանակությունը: Մշակվել են նախկինում չուսումնասիրված նոր տիպի կոնդենսված տրիազոլոպիրիդազինների և չկոնդենսված պիրազոլիլպիրիդազինների, թիոպիրիդազինների, օքսիպիրիդազինների պիրազոլիլ-, օքսադիազոլիլ-, ազինիլ- ածանցյալների, ինչպես նաև կոնդենսված տրիազոլո-, թիազոլոպիրիմիդիններ-ի և չկոնդեսված պիրազոլիլ-, թիազոլիլ-, օքսադիազոլիլ-, թիադիազոլիլպիրիմիդիններ-ի ածանցյալների ստացման մատչելի եղանակներ: Մշակվել են մի շարք միացություն-ների միկրոալիքային ճառագայթների ազդեցությամբ ընթացող սինթեզի եղանակներ, որոնց դեպքում առավել կարճ ժամանակահատվածում ստացվել են բարձր ելքերով արգասիքներ, ինչը կարող է նպաստել նպատակային միացությունների ինքնարժեքի նվազմանը: Սինթեզված միացությունների նախնական լաբորատոր վեգետացիոն փոր-ձարկումների արդյունքում հայտնաբերվել են աճախթանիչ հատկություններով օժտված բազմաթիվ միացություններ: Վերջիններից առանձնացվել են 80%-ից ավել աճախթա-նիչ ակտիվություն ցուցաբերած 35 միացություններ, որոնցից ամենաակտիվ պատրաս-տուկներն ընտրվել են հետագա դաշտային փորձարկումների համար: Սինթեզված միացություններից ութը ցուցաբերել են 40-80% հերբիցիդային ակտիվություն 3 *կգ/հա* չափաքանակներով: Սինթեզներն իրականացվել են մատչելի ելանյութերի հիման վրա, ինչը հնարավորություն է տալիս ոչ բարդ փոխարկումների միջոցով ցածր ինքնարժե-քով ստանալ նոր աճակարգավորիչներ: Բացի այդ, ստացված միացությունները կարող են գործնական հետաքրքրություն ներկայացնել որպես մատչելի ելանյութեր նոր ֆիզիոլոգիապես ակտիվ նյութերի սինթեզի համար:

Հրապարակությունները: Ատենախոսական աշխատանքի հիմնական բովանդակությունը արտացոլված է 10 գիտական հոդվածներում և 4 միջազգային գիտաժողովների զեկույցներում:

Աշխատանքի փորձարկումը: Ատենախոսական աշխատանքի հիմնական դրույթները ներկայացվել են 4 միջազգային գիտաժողովներում. III Всероссийская научная конференция (с международным участием) “Успехи синтеза и комплексообразования” (Москва, 2014); 3-rd International conference of organic chemistry (ICOC-2014) "Organic synthesis – driving force of life development" (Tbilisi, 2014); V Международная конференция СВС2015 “Химия гетероциклических соединений. Современные аспекты” (Санкт-Петербург, 2015); 5-th International Conference of Young Scientists “Chemistry today-2016” (Tbilisi, 2016); Международная научно-практическая конференция “Проблемы и достижения современной науки” (Чехия, Прага, 2016); Международная научно-практическая конференция “Современная наука: проблемы и перспективы развития” (Таджикистан, Душанбе, 2016):

Ատենախոսության կառուցվածքը: Ատենախոսական աշխատանքը շարադրված է համակարգչային շարվածքի 144 էջի վրա և կազմված է ներածությունից, գրական ակնարկից, արդյունքների քննարկումից, փորձնական մասից, եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից (250 հղում) և պարունակում է 2 նկար ու 9 աղյուսակ:

Գ Լ ՈՒ Խ 1

ԳՐԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Ինչպես նշվել էր, հետազոտության նպատակներից է ազինային (պիրիդազինային, պիրիմիդինային և տրիազինային), պիրազոլային և 1,3,4-օքսադիազոլային օղակների համադրությամբ հետերոցիկլիկ համակարգերի նոր ածանցյալների սինթեզի եղանակների մշակումը: Իրականացված նպատակային սինթեզներում ելանյութեր են հանդիսացել հիմնականում պիրիդազինի ածանցյալները: 1,3,4-Օքսադիազոլային ցիկլը կազմավորվել է մոլեկուլներում հետերոցիկլման ռեակցիաների օգնությամբ: Դրան հակառակ պիրիմիդինի և 1,3,5-տրիազինի օղակները ներմուծվել են մոլեկուլների մեջ օգտագործելով արդեն նախօրոք ստացված այդ հետերոցիկլերի ածանցյալները: Այդ պատճառով գրական ակնարկում ներկայացված են պիրիդազին-3-ոնի, 3,6-դիտեղակալված պիրիդազինների, պիրազոլիլպիրիդազինների և 1,3,4-օքսադիազոլի ածանցյալների սինթեզին և կենսաբանական հատկություններին վերաբերվող աշխատանքները, իսկ պիրիմիդինի և 1,3,5-տրիազինի դեպքերում քննարկվում են միայն դրանց ածանցյալների կենսաբանական ակտիվությունների վերաբերյալ տվյալները:

1.1. Պիրիդազին-3-ոնի ածանցյալների սինթեզը և կենսաբանական հատկությունները

Գրականության մեջ պիրիդազինի և դրա ածանցյալների վերաբերյալ առաջին տեղեկությունները հրապարակվել են 1951 թ. ամերիկացի գիտնականներ Միզզոնիի և Սպոերրիի կողմից: Նկարագրվել է մալեինանհիդրիդից եռացման պայմաններում հիդրազինի հանքային թթուների աղերի առկայությամբ պիրիդազին-3,6-դիոնի սինթեզը: Ստացված պիրիդազին-3,6-դիոնը քլորացվել է $POCl_3$-ով, իսկ առաջացած դիքլորպիրիդազինը ենթարկվել է հիդրոգենացման [1]:



Հետագայում ռենտգենյան ճառագայթների ռեֆրակցիայի միջոցով ապացուցվել է, որ 3-օքսիպիրիդազին-6-ոնը գտնվում է մոնոլակտիմային օքսի ձևում (**Ա**): Անցումը մոնոանիոնից (**Բ**) դիանիոնի (**Գ**) տեղի է ունենում միայն pH > 13 դեպքում [2]:



Սթիկսթոֆֆվերկը [3] մալեինաթթվի և տարբեր հիդրազինների աղերի փոխազդեցությամբ իրականացրել է 6-օքսիպիրիդազին-3-ոնի ածանցյալների սինթեզը:



R = H, $(CH_2)_2CN$; X = H, CH_3, Cl .

Դեռևս 1968 թ. հաստատվել է, որ մալեինաթթվի հիդրազիդը հանդիսանում է բույսերի աճի բավական արդյունավետ կարգավորիչ, ինչպես նաև համատարած ազդեցության հերբիցիդ, իսկ դրա նատրիումական կամ դիէթանոլամինային աղն արտադրվում է մեծ քանակներով հայտնի պատրաստուկ ՄԹՀ (մալեինաթթվի հիդրազիդ) անվան տակ [4], որն ունի կիրառման լայն բնագավառ, քանզի կախված կոնցենտրացիայից կարող է տարբեր ազդեցություն ցուցաբերել բույսերի վրա [5-20]:

Դրյուեյը և այլոք մալեինանհիդրիդի և ֆենիլհիդրազինի փոխազդեցությամբ ստացել են 2-ֆենիլ-3-օքսիպիրիդազին-6-ոնը և ուսումնասիրել դրա փոխարկումը [21]:



Այնուհետև Դրյուեյը Էյխենբերգերի հետ միասին իրականացրել են 5-քլոր-3-հիդրոքսի-2-ֆենիլ-պիրիդազին-6-ոնի սինթեզը: Սինթեզել են նաև դիհիդրոպիրիդազինի մի շարք ածանցյալներ, որոնք հանդիսանում են արժեքավոր հակապարազիտային և հակացնցումային միջոցներ [22]: Ցույց է տրվել, որ 5-քլոր-3-հիդրոքսի-2-ֆենիլպիրիդա-

զին-6-ոնը փոխազդելով ալկիլ քլորֆորմիատի հետ, առաջացնում է համապատասխան կարբոնաթթուների էսթերներ:



Գոդինը և Լե Բերրը մալեինաթթվի քլորանհիդրիդը կոնդենսելով սաթաթթվի, մալեինաթթվի և ֆտալաթթվի հիդրազիդների հետ սինթեզել են 3-օքսիպիրիդազին-6--ոնի N-տեղակալված ածանցյալներ [23]: Սինթեզված միացությունները կիրառություն են գտել բժշկության և գյուղատնտեսության մեջ:



1951 թ. Կուրտիսի կողմից ցույց է տրվել, որ 3-օքսիպիրիդազին-6-ոնի այն ածանցյալները, որոնց մոլեկուլում ածխածնի ատոմների մոտ կան տարբեր տեղակալիչներ **(1)**, չեն ցուցաբերում ֆիզիոլոգիական ակտիվություն [24], սակայն, երբ ազոտի կամ թթվածնի ատոմի մոտ առկա են տեղակալիչներ **(2)**, դրանք ձեռք են բերում արտահայտված ակտիվություն: Օրինակ՝ 3-օքսիպիրիդազին-6-ոնի մեթօքսի- և մեթիլամինո ածանցյալները հանդիսանում են հայտնի աճակարգավորիչներ [25], իսկ N-ացիլ ածանցյալները բույսերի աճը կանխող իրենց հատկություններով գերազանցում են չտեղակալված ՄԹՀ-ին [26,27] և հանդիսանում են բավական արդյունավետ հերբիցիդներ [28,29]: Նույն հիդրազիդի N-*ω*-նիտրոբենզոիլ, ինչպես նաև O-ացիլ ածանցյալները ցուցաբերում են բույսերի աճը կանխող, հերբիցիդային և ֆունգիցիդային հատկություններ [30-35]:



1 **2** **3**

R = ալկիլ, ացիլ, *ա*-նիտրոբենզոիլ, ֆենիլ .

Հոֆֆմանը նկարագրել է 1-բենզոիլ-3-հիդրոքսի-6(1H)-պիրիդազինի ածանցյալների սինթեզը **(3)** և ցույց է տվել, որ դրանք ունեն աճախթանիչ հատկություններ [36]:

Տակահաշիի կողմից նկարագրվել են 6-ալկիլօքսի-4-դիմեթիլամինա-2-ֆենիլպիրիդազին-3-ոնի և 4,6-դիէթօքսի-2-ֆենիլ-պիրիդազին-3-ոնի սինթեզները [37]:





R= C_2H_5, C_3H_7, *իզո*-C_3H_7, C_4H_9, *իզո*-C_4H_9, *իզո*-C_5H_{11}, $C_6H_5CH_2$, $C_2H_5OCH_2$, $CH_3O(CH_2)_2$.

Ստեֆանին և Հովարդը ուսումնասիրել են պիրիդազին-3,6-դիոնի տեղակալման ռեակցիաները [38]: Ցույց է տվել, որ պիրիդազին-3,6-դիոնի հետ բենզոիլքլորիդի կամ քլորմրջնաթթվի ալկիլ էսթերների փոխազդման ժամանակ Շոտտեն-Բաումանի ռեակցիայի պայմաններում տեղի է ունենում միայն O-ացիլում:



R = OCH_3, OC_2H_5, C_6H_5 .

Գալոյանն իրականացրել է պիրիդազին-3,6-դիոնի և դրա N-տեղակալված ածանցյալների փոխազդեցությունը տարբեր սուլֆոքլորիդների հետ, որի արդյունքում ստացվել են պիրիդազինների համապատասխան O-տեղակալված ածանցյալները [39]:



R = H, C_6H_5; R^1= C_2H_5, C_3H_7, C_4H_9, *հqn*-C_4H_9, *հqn*-C_5H_{11}, C_6H_5, $C_6H_5CH_2$, *ա*-CH_3-C_6H_4, *ա*-Cl-C_6H_4, *ա*-$NO_2C_6H_4$.

Բալոնյակը և Լինկովսկան իրականացրել են 3-օքսիպիրիդազին-6-ոնի տեղակալված ածանցյալների քլորացումը $POCl_3$-ով, ինչպես նաև $POCl_3$-ի և PCl_5-ի խառնուրդով, որի արդյունքում ստացվել են համապատասխան 3-քլոր և 3,5-դիքլորածանցյալներ: Ցույց է տրվել, որ ստացված միացություններն ենթարկվում են նուկլեոֆիլ տեղակալման բացառապես 5-րդ դիրքում գտնվող քլորի ատոմի հաշվին [40]:



R = 2-$C_6H_4OCH_3$, 3-$C_6H_4OCH_3$, 4-$C_6H_4OCH_3$; R^1 = $NHNH_2$, $(C_2H_5)_2N$,  .

Սքոնբեքը ցույց է տվել, որ 3,6-դիօքսիպիրիդազինի և քլորքացախաթթվի փոխազդեցության ժամանակ կախված պայմաններից կարող են ստացվել N-, O-, ինչպես նաև միաժամանակ N- և O-ացիլ տեղակալված ածանցյալներ [41]:



Հլադոնը ուսումնասիրել է պիրիդազին-3,6-դիոնի և պիրիդազին-6-ոնի ածանցյալները, որոնք ցուցաբերել են ցիտոտոքսիկ ազդեցություն [42]: Ճապոնացի գիտնականները սինթեզել և ուսումնասիրել են պիրիդազին-6-ոնի տեղակալված ածանցյալները,

որոնք ցուցաբերել են աճախթանիչ հատկություններ [43]: Հայտնի են նաև Պիննաի և հետագայում նաև Սահինաի [44-47] աշխատանքները հակաբորբոքիչ, ցավազրկող, հիպոթենզիվ և հակատրոմբոտիկ ազդեցությամբ օժտված միացությունների ուսումնասիրությունների ուղղությամբ:

Եգիպտացի գիտնական Յասսինը 1991 թ. աշխատակիցների հետ միասին նկարագրել է անտրացենիլ պիրիդազոնների սինթեզը և փոխարկումները: Ստացված միացությունները ցուցաբերում են հակաբակտերիալ ակտիվություն [48]:



R = H, C_6H_5 ; Ar =

Ռուբատի և աշխատակիցների կողմից ուսումնասիրվել են պիրիդազոնի N-տեղակալված ածանցյալների ստացումն և հատկությունները: Ցույց է տրվել, որ վերջիններս օժտված են ցավազրկող և հակաբորբոքիչ ազդեցությամբ [49-51]:

Իրականացվել է տեղակալված ֆենիլպիրիդազոնների սինթեզը և ալկիլման ռեակցիաները [52]:



$R = R^1 = H, CH_3$; $R^2 = CH_3, C_2H_5, C_6H_5CH_2$; X = Cl, Br .

Կորեացի գիտնականներին հաջողվել է 4,5-դիքլորպիրիդազին-3-ոնը և 4,5,6-տրիքլորպիրիդազին-3-ոնը N,N-դիմեթիլֆորմամիդում 48 *ժ* եռացնելով ստանալ համապատասխան 5 և 6- տեղակալված դիմեթիլամինոպիրիդազինոնը [53]:



Դոգրուերը և այլոք նկարագրել են մեթոքսիֆենիլ-6-օքսոպիրիդազինիլացետատի սինթեզը: Ստացված միացությունը ցուցաբերել է բարձր հակացնցումնային ակտիվություն [54, 55]:



2004 թ. սինթեզվել և ուսումնասիրվել են 6-տեղակալված-3-պիրիդազինոն-2-իլացետատի ածանցյալները, որոնք ցուցաբերել են ցավազրկող և հակաբորբոքիչ ազդեցություն [56]:



R = C_6H_5, $C_6H_5CH_2$, 2-$C_2H_5OC_6H_4$, 2-FC_6H_4, 4-FC_6H_4, 2-$CH_3OC_6H_4$, 4-$NO_2C_6H_4$.

Հետագայում իրականացվել է պիրիդազին-3-ոնի N-տեղակալված ածանցյալների սինթեզը և ցույց է տրվել որ վերջիններս համարվում են α-1 բլոկատորներ [57]:



R = *o*-CH_3O-C_6H_4-$O(CH_2)_2$, 3,4-$(CH_3O)_2$-C_6H_3-$O(CH_2)_2$; R^1 = 2-OCH_3, 2-Cl, 2,6-$(CH_3)_2$; n = 2-6 .

Պանֆիլովն 2007 թ. իրականացրել է 6-ֆենիլպիրիդազին-3-ոնի արիլումը 4-նիտրոքլորբենզոլով կալիումի կարբոնատի ներկայությամբ, այնուհետև նիտրոխմբի վերականգնմամբ ստացել է 2-(4-ամինոֆենիլ)-6-ֆենիլպիրիդազին-3-ոնը [58]:



Չինացի գիտնականները 2009 թ. 3,4-դիքլոր-5-ֆենիլֆուրանոնի և հիդրազինհիդրատի փոխազդեցությունից ստացել են 5-քլոր-6-ֆենիլպիրիդազին-3-ոն և իրականացրել վերջինիս մի շարք փոխարկումներ: Սինթեզված միացությունները ցուցաբերել են հակասնկային ակտիվություն [59]:



R = $COOC_2H_5$, 2-NO_2-C_6H_4, 4-NO_2-C_6H_4, 2-Cl-պիրիդին, 2-F-C_6H_4, 2-I-C_6H_4, 4-I-C_6H_4, 2-CH_3O-C_6H_4 .

2010 թ. Ասիֆը 2-օքսո-N-ֆենիլպրոպանհիդրազոնիլցիանիդը փոխազդեցության մեջ դնելով ցիանքացախաթթվի էթիլ էսթերի հետ, կախված ջերմաստիճանային պայմաններից, ստացել է դիհիդրոպիրիդազինի կարբոնիտրիլը և դիկարբոնիտրիլը [60]:



Հնդիկ գիտնականները 2012 թ. β-արոիլպրոպիոնաթթուների և հիդրազինկարբոհիդրազիդի փոխազդեցությամբ ստացել են պիրիդազոնի N-տեղակալված կարբոհիդրազիդներ, որոնք արիլիզոթիոցիանատների հետ առաջացրել են համապատասխան թիոսեմիկարբազիդներ: Վերջիններս օժտված են հակաբորբոքիչ ակտիվությամբ [61]:



Սինգիը և գործընկերները բենզոլից և սաթաթթվի անհիդրիդից բազմափուլ սինթեզի միջոցով ստացել են 6-(3-նիտրոֆենիլ)-4-բենզիլիդեն-2,3,5-տրիհիդրոպիրիդազին-3-ոնը: Սինթեզված միացությունները ցուցաբերել են ցավազրկող և հակաբորբոքիչ ազդեցություն [62]:



Վերջին տարիներին գիտնականները պիրիդազին-3-ոնի տեղակալված ածանցյալներ ստանալու համար, բացի սինթեզի ավանդական եղանակներից, կիրառել են նաև միկրոալիքային ճառագայթման մեթոդը [63]:



2016 թ. Կիմի և աշխատակիցների կողմից պիրիդազոնների ստացումն իրականացվել է նաև 6-տեղակալված 3-քլորպիրիդազինի տաքացմամբ քացախաթթու-ջուր միջավայրում [64]:



R = 3-C_6H_4N, 4-C_6H_4N.

1.2. 3,6-Դիտեղակալված պիրիդազինների սինթեզը և կենսաբանական հատկությունները

1956 թ. Տակոբայաշին իրականացրել է 6-մերկապտոպիրիդազին-3-ոլի փոխազդեցությունն ալկիլյոդիդների հետ ալկոհոլատների ներկայությամբ [65], որի արդյունքում բարձր ելքերով ստացվել են համապատասխան 6-ալկիլթիոպիրիդազին-3-ոններ:



$R = CH_3, C_2H_5$.

1959 թ. Սթեքի կողմից նկարագրվել է 3,6-դիքլորպիրիդազինի հիման վրա համապատասխան մոնո- և բիս- տեղակալված ածանցյալների սինթեզը [66]: Իրականացվել է նաև 3,6-դիքլորպիրիդազինի փոխազդեցությունն ամոնիումի հիդրոքսիդի հետ [67]: Ռեակցիոն խառնուրդը 10 *ժ* եռացնելով էթանոլի միջավայրում հաջողվել է ստանալ 3-ամինո-6-քլորպիրիդազին: Ստացված միացությունները լայն կիրառություն են գտել դեղագործության մեջ:



$R = CH_3, C_6H_4Cl; R^1 = CH_3, (CH_3)_2NH,$ 

.

Բրզոզովսկին իրականացրել է 3-ամինո-6-քլորպիրիդազինի փոխազդեցությունը 4-ամինոբենզոսուլֆոքլորիդի հետ և արդյունքում ստացված 3-սուլֆանիլամիդո-6-քլորպիրիդազինից սինթեզել է 3-սուլֆանիլամիդո-6-մեթոքսիպիրիդազինը [68]:



Քոադը նույնպես նկարագրել է դիտեղակալված պիրիդազինների ստացումը [69]:

1959 թ. Սքոնբեքի կողմից նկարագրված է կարբէթօքսիէթիլթիո-6-քլորպիրիդազինի սինթեզը, որի հիդրոլիզից ստացված թթուն փոխազդեցության մեջ դնելով KSH-ի հետ ստացվել է 2-((6-մերկապտոպիրիդազին-3-իլ)թիո)քացախաթթու, իսկ վերջինից էլ՝ համապատասխան բիս- ածանցյալը [41]:



Հետագայում կրկին Սքոնբեքի կողմից 6-քլորպիրիդազին-3-ոնից և քլորքացախաթթվից սինթեզվել է 2-կարբօքսիմեթիլ-6-քլորպիրիդազին-3-ոնը: Հատուկ պայմաններում 3,6-դիքլորպիրիդազինը փոխազդելով նատրիումի 2-օքսիդոացետատի հետ առաջացնում է նատրիումի 2-((6-քլորպիրիդազին-3-իլ)օքսի)ացետատ: Վերջինիս մոլեկուլում երկրորդ մեթօքսիկարբոնիլ խումբ ներմուծելու փորձերը բերել են մոլեկուլի հիդրոլիզի և 3-քլորպիրիդազին-6-ոնի առաջացմանը:



Էյլերի կողմից իրականացվել է 6-հիդրազինո-3-քլորպիրիդազինի սինթեզը: Վերջինիս քլորաջրածնական աղը որպես աճակարգավորիչ կիրառություն ունի գյուղատնտեսության մեջ [70]:



Կումագայան ուսումնասիրել է 3,6-դիքլորպիրիդազինի, 6-քլորպիրիդազին-3-թիոլի և պիրիդազին-3,6-դիթիոլի փոխազդեցությունը մի շարք ամինների և հիդրազին հիդրատի հետ սպիրտային միջավայրում [71,72]:



R = CH_3, C_2H_5, C_3H_7, *հqn*-C_3H_7, C_4H_9, *հqn*-C_4H_9 ; Y = Cl, SH .

1963 թ. Չանգը նկարագրել է 3,6-դիքլորպիրիդազինի փոխազդեցությունը 4-ամինոբենզսուլֆամիդի հետ, որի արդյունքում ստացված 4-(6-քլոր-պիրիդազին-3-իլամինո)-բենզսուլֆամիդը նատրիումի մեթիլատի հետ փոխազդելիս բարձր ելքերով առաջացրել է 4-((6-մեթոքսիպիրիդազին-3-իլ)ամինո)բենզոսուլֆամիդ [73]:



Կինուգավան 3,6-դիբրոմպիրիդազինն ալկոհոլատի ներկայությամբ փոխազդեցության մեջ է դրել ծծմբաջրածնի հետ սինթեզելով 6-բրոմպիրիդազին-3-թիոլը, որն էլ փոխազդելով բրոմցիանի հետ, առաջացրել է 6-բրոմպիրիդազին-3-թիոցիան [74]:



Պետրիքի և այլոց կողմից 3-քլոր-6-ալկիլպիրիդազինի և պիրիմիդին-2-թիոնի կամ պիրիդին-2-թիոնի փոխազդմամբ իրականացվել է թիոքսոազինների սինթեզը [75]:



Հերբիցիդային բարձր ակտիվությամբ օժտված 3-ֆենօքսի-6-քլորպիրիդազինի ածանցյալները սինթեզվել են 3,6-դիքլորպիրիդազինի և տարբեր տեղակալված ֆենոլների փոխազդմամբ [76]:



R = H, CH_3 .

Ուսումնասիրվել է 3-քլոր-6-դիմեթիլամինոպիրիդազինի փոխազդեցությունը Գրինյարի ռեակտիվի հետ [77]:

1975 թ. Գ. Պիֆֆերին և այլոք սինթեզել են 3-հիդրազինոպիրիդազինի ածանցյալները և ուսումնասիրել դրանց հակահիպերտենզիվ հատկությունները [78]:



1978 թ. Ֆիլիպսի և այլոց կողմից ցույց է տրվել, որ 3,6-դիքլորպիրիդազինը նուկլեոֆիլ տեղակալման մեխանիզմով թույլ թթվային միջավայրում փոխազդում է 6-հալո-3-պիրիդազինթիոնի հետ առաջացնելով 3,6-բիս(6-հալոպիրիդազին-3-իլսուլֆանիլ)-պիրիդազին [79]:



Y= Cl, Br, H .

Ստանովնիկը ուսումնասիրել է պիրիդազինի SH, NH և OH խմբեր պարունակող ածանցյալների ալկիլման ռեակցիաները: Նրան հաջողվել է բարձր ելքերով ստանալ համապատասխան S-, N- և O-մեթիլ ածանցյալներ: Ցույց է տրվել, որ միաժամանակ

SH և NH խմբեր պարունակող միացություններում մեթիլացումն ընթանում է ընտրողաբար՝ նախ ստացվում է համապատասխան S-մեթիլածանցյալը, ապա հետագա մեթիլացման ժամանակ՝ S,N-դիմեթիլ ածանցյալը [80]:



R= R^1= ալկիլ .

1984 թ. Լիանգն իրականացրել է 3-արիլ-6-ալկիլպիրիդազինների ստացումը [81]:



R = α-C_3H_7, α-C_4H_9, α-C_5H_{11}, α-C_6H_{13}, α-C_7H_{15}, α-C_8H_{17}, α-C_9H_{19}, α-$C_{10}H_{21}$;
R^1 = CH_3, α-C_3H_7 .

Բոեհների և այլոց կողմից նույնպես ուսումնասիրվել են 3,6-դիտեղակալված պիրիդազինները: Քացախաթթվի միջավայրում 6-քլորպիրիդազին-3-թիոլի միջով քլոր անցկացնելիս գոյանում է համապատասխան սուլֆոնիլքլորիդը, իսկ վերջինիս ամինոլիզից առաջանում է 6-քլորպիրիդազին-3-սուլֆոնաթթվի ամիդը [82]:



Նրանք ուսումնասիրել են նաև թիոմիզանյութի մնացորդի միջոցով միմյանց հետ միացած տրիազինի(պիրիմիդինի) և պիրիդազինի օղակները: Ցույց է տրվել, որ ստացված միացություններն ունեն հերբիցիդային և աճակարգավորիչ հատկություններ:



R^1 = H; R^2 = R^3 = C_{1-5} -ալկիլ, հալոալկիլ, հալոալկօքսի;

R^4 = H, C_6H_5 ; X = CH, N; Z = O, S.

Մինչ այսօր կատարված ուսումնասիրությունները ցույց են տվել, որ այս դասի միացությունների կիրառման հիմնական բնագավառներն են գյուղատնտեսությունն ու բժշկությունը [83-92]:

1990 թ. Խալիֆան սինթեզել և ուսումնասիրել է պիրիդազինների քլոր ածանցյալների որոշ ռեակցիաներ [93]:



Ա. Դեեբը, Ֆ. Յասսինը և այլոք ուսումնասիրել են պիրիդազինի SH և NH, OH և NH ալկիլման ռեակցիաներն և եկել այն եզրահանգման, որ առաջին դեպքում տեղի է ունենում հիմնականում S-ալկիլում, իսկ երկրորդ դեպքում՝ O-ալկիլում [94]:



Նմանատիպ աշխատանքներ են կատարել, ինչպես Յասսինը, այնպես էլ այլ գիտնականներ [95,96]:

1993 թ. Կունոն և գործընկերները սինթեզել և ուսումնասիրել են 4-արիլպիրիդազինի ածանցյալները [97]:



1994 թ. Մորեաուի և այլոց կողմից կատարված ուսումնասիրությունների արդյունքում հիդրազինոպիրիդազինի ածանցյալներն առաջարկվել են որպես ցավազրկող, հակացնցումային, հակաէպիլեպտիկ միջոցներ [98]: Ավելի ուշ Դոգրուերը սինթեզներ է կատարել կիրառելով միկրոալիքային ճառագայթման մեթոդը, որի արդյունքում սինթեզված միզանյութի ածանցյալները ցուցաբերել են հակամիկրոբային և հակավիրուսային ակտիվություն[99]:



Ռիկովսկին և Վոլիֆիսկան իրականացրել են 1,2,4-տրիազինների և C-նուկլեոֆիլների ռեակցիան, որի ժամանակ տեղի է ունեցել օղակի բացում, ապա փակում և արդյունքում ստացվել են 3-ամինոպիրիդազինների ածանցյալներ [100]:



Մեռնառին և Լագրենը ստացել են 3,6-դիֆորմիլպիրիդազինդիօքսիմը և 3,6-դիբենզոիլպիրիդազինդիօքսիմը ըստ հետևյալ սխեմայի [101].



Ճապոնացի գիտնականները 6-քլորպիրիդազին-3-էթիլկարբօքսիլատի և անջուր հիդրազինի փոխազդեցությունից ստացել են պիրիդազինի հիդրազինային մի շարք ածանցյալներ, որոնց մեջ գերակշռող արգասիքը 6-քլորպիրիդազին-3-կարբոհիդրազիդն է [102]:



2000 թ. բելգիացի գիտնականները նկարագրել են 3-ամինո-6-(հետերո)արիլպիրիդազինների սինթեզը 3-ամինո-6-հալոպիրիդազինի և տրիբութիլ(արիլ)անագի ներկայությամբ [103]:



R = C_6H_5, 3-Cl-C_6H_4, 3-F-C_6H_4, 3-CH_3S-C_6H_4, 3-CH_3O-C_6H_4, 2-CF_3-C_6H_4;
X = Cl, I .

3-Ացետամիդո-6-արիլպիրիդազինների նոր ածանցյալների ստացման եղանակ է առաջարկել Ս. Գուերին 2002 թ.: Ցուց է տրվել, որ այդ միացություններն հանդիսանում են նեյրոպեպտիդների անտագոնիստներ [104]:



2003 թ. Սայեդը աշխատակիցների հետ միասին ուսումնասիրել է 6-արիլ-3-քլորպիրիդազինի ռեակցիան թիոմիզանյութի հետ, ապա ստացված թիոքսո միացությունները ենթարկվել են ալկիլման: Ցույց է տրվել, որ վերջիններս ցուցաբերում են հակամանրէային և ֆունգիցիդային հատկություններ [105]:



2003 և 2004 թթ. Կանդիլեն ուսումնասիրել է թիոքսոպիրիդազինի SH և NH տեղակալման ռեակցիաները: Ցույց է տրվել, որ միևնույն ռեագենտի դեպքում, կախված լուծիչի բնույթից և ջերմաստիճանային ռեժիմից կարող են ստացվել կամ S- կամ N-տեղակալման արգասիքներ [106,107]:



Կանդիլեն և այլոք հիդրազինոպիրիդազինի ածանցյալը փոխազդեցության մեջ դնելով ալդեհիդների, կետոնների հետ իրականացրել են հիդրազոնների սինթեզը: Վերջիններս ցուցաբերել են հակամիկրոբային բարձր ակտիվություն [108,109]:



$R^1 = CH_3, C_6H_5$; $R^2 = CH_3, C_6H_5, COCH_3$;

Ar = *o*-CH_3O-C_6H_4; $Ar^1 = C_6H_5$, *պ*-CH_3-C_6H_4, *պ*-Cl-C_6H_4, *պ*-CH_3O-C_6H_4.

Աբուբշահիթի կողմից ցույց է տրվել, որ տեղակալված մեթիլամինոպիրիդազինը մեթիլյոդիդի հետ փոխազդելիս առաջացնում է համապատասխան տրիմեթիլամոնիումային աղը [110]:



Ալ-Կամալին և գործընկերներն ուսումնասիրել են թիոպիրիդազինների սինթեզը և կենսաբանական ակտիվությունը: Ցույց է տրվել, որ այդ միացություններն ունեն հակաբակտերիալ, հակաուռուցքային և հակամանրէային հատկություններ [111]:



Հետագայում Բենմոուսան և այլոք իրականացրել են պիրիդազին-3-թիոնի ածանցյալների սինթեզը և ցույց են տվել, որ դրանք ցուցաբերում են հակահիպերտենզիվ, հակասնկային, անալգետիկ, իմունոկարգավորիչ և սրտախթանիչ ազդեցություն: Բացի այդ կիրառվում են որպես մալարիայի դեմ պայքարի միջոցներ [112]:



Էլ-Սալամը և այլոք 3,6-դիքլորպիրիդազինը փոխազդեցության մեջ դնելով 2-ամինոֆենոլի և L-ֆենիլալանինի հետ ստացել են իմիդազոլոպիրիդազինի ածանցյալները [113]:



2011 թ. Ռիզկը ուսումնասիրել է տեղակալված թիադիազոլիլամինոպիրիդազինի փոխազդեցությունը քլորքացախաթթվի էթիլէսթերի և քլորանհիդրիդի հետ, որի արդյունքում սինթեզված միացությունները ցուցաբերել են հակասնկային, հակաբակտերիալ և հակատուբերկուլյոզային ակտիվություն [114]:



$Ar = C_6H_4$-4-$NHCOCH_3$.

2012 և 2013 թթ. եգիպտացի գիտնականները սինթեզել և ուսումնասիրել են պիրիդազինի սուլֆիդային և դիսուլֆիդային ածանցյալները և եկել այն եզրահանգման, որ այդ միացություններն ունեն հակասնկային, հակամանրէային, հակատուբերկուլյոզային, հակադիաբետիկ [115], հակաքաղցկեղային, հակահիպերտենզիվ, հերբիցիդային և աճակարգավորիչ հատկություններ [116]:



$Ar = 3,4\text{-}(CH_3)_2C_6H_3$; Ar' =





Հետագայում Ֆ. Մեդդան և այլոք 3,6-դիքլորպիրիդազինի քլորի ատոմներից մեկը հեշտությամբ ենթարկել են ֆունկցիոնալացման սպիրտային միջավայրում 30 *րոպե* եռացման պայմաններում, իսկ երկրորդ քլորի ֆունկցիոնալացումն իրականացրել են միկրոալիքային ճառագայթմամբ 100 ^{0}C-ում 1 ժամ ճառագայթման պայմաններում [117]:



R = H, CH_3, CH_3O, *ա*-CH_3O, *ա*-OH, *ա*-SO_2NH_2, *ա*-COOEt, *ա*-$OCH_2C(O)NH_2$, *ա*-CH_3, *մ*-CH_3, *ա*-Et, *մ*-Cl, *մ*-PhO .

Ճապոնացի գիտնականներն իրականացրել են ալլիլսելենոպիրիդազինների սինթեզը և ցույց տվել, որ դրանք ցուցաբերում են հակաուռուցքային ակտիվություն [118,119]:



R = CH_3, C_2H_5, C_3H_7, C_4H_9, C_5H_{11}, C_6H_{13}, C_7H_{15} .

Նույն թվականին եգիպտացի գիտնականները նկարագրել են [6-(4-ֆենօքսիֆենիլ)պիրիդազին-3-իլօքսի]ացետիլիզոթիոցիանատի ստացումը [120]:



Վերջինս փոխազդեցության մեջ դնելով մի շարք նուկլեոֆիլների հետ սինթեզել են բազմաթիվ ածանցյալներ, որոնք ցուցաբերել են հակաբակտերիալ և հակասնկային ակտիվություն:

2014 թ. չինացի գիտնականներն ուսումնասիրել են 3-N-տեղակալված-ամինո-6-բենզիլօքսիպիրիդազինի ածանցյալները, որոնք օժտված են հերբիցիդային ակտիվությամբ [121].



1.3. Պիրազոլիլպիրիդազինների սինթեզը և կենսաբանական ակտիվությունը

Վերջին տարիներին մեծ հետաքրքրություն է ներկայացնում պիրազոլների և դրանց ածանցյալների սինթեզը, ինչը պայմանավորված է նրանով, որ բնական շատ միացություններ պարունակում են պիրազոլային օղակ [122], որն հանդիսանում է կարևոր կառուցվածքային մասնիկ: Այդ ածանցյալները մեծ կիրառություն են գտել արդյունաբերության, բժշկության և դեղագործության մեջ [123-137]: Պիրազոլի ածանցյալների շարքին են պատկանում հայտնի դեղամիջոցներ՝ անալգինը, անտիպիրինը, պիրամիդոնը, պեստիցիդներ՝ պիրոլանը, իզոլանը, պիրազօքսանը, տարբեր ներկանյութեր:

Պիրազոլիլպիրիդազինային ածանցյալների ստացման վերաբերյալ տեղեկությունները գրականության մեջ ի հայտ են եկել դեռևս 1980-ական թվականներին՝ շնորհիվ

հունգարացի գիտնականների, որոնք սինթեզել են բազմաթիվ R^1, R^2, R^3, R^4 տեղակալ-ված ածանցյալներ [138-140]:



1983 թ. Դռափերը և Քասթլեն փուլային սինթեզով 3-քլոր-6-հիդրազինո-5-նիտ-րոպիրիդազին-4-ամինից ստացել են 3-(3,5-դիմեթիլպիրազոլ-1-իլ)պիրիդազին-4,5-դի-ամին [141]:



Սզիլագին շարունակելով աշխատանքներն ևս նկարագրել է պիրազոլիլպիրիդա-զինի նոր ածանցյալների սինթեզ [142]:



R = CH_3, $COOC_2H_5$.

1986 թ. Փիթը սինթեզել է 5-ամինո-1-(6-քլորպիրիդազին-3-իլ)-1*H*-պիրազոլ-4-կարբոնիտրիլը, որը մշակելով ծծմբական թթվով ստացել է համապատասխան ամիդը [143]:



1990 թ. Խալիֆան 3,4-դիֆենիլ-5-ցիանո-6-քլորպիրիդազինի և հիդրազինի հետ փոխազդեցությամբ ստացել է 3,4-դիֆենիլ-5-ամինոպիրազոլո[3,4-c]պիրիդազինը [93]:



Հետագայում ցույց է տրվել, որ երբ պիրիդազինային օղակը համակցված է պիրազոլային և ինդոլային օղակների հետ, ապա սինթեզված միացությունները հանդես են գալիս որպես հակահիպերտենզիվ ագենտներ [144]:



1995 թ. Աբդ-Էլ Գհանին նկարագրել է 3-(բենզիլթիո)-4-(5-(բենզիլթիո)-1,3-դիֆենիլ-1H-պիրազոլ-4-իլ)-6-(4-էթոքսիֆենիլ)պիրիդազինի ստացումը և հակաբակտերիալ ակտիվությունը [145]:



1999 թ. էլլիսի և Վեսթի հեղինակած գրքի մեջ նկարագրվում է 3-(1-պիրազոլիլ)-պիրիդազինների հակաբորբոքիչ ակտիվությունը [146]:

Սայեդը ուսումնասիրել է նաև քլորպիրիդազինի ածանցյալից պիրազոլիլպիրիդազինի ածանցյալի ստացումը [105]:



Սինթեզվել և ուսումնասիրվել են կոնդենսված պիրազոլոպիրիդազոնների և ամինոպիրազոլոպիրիդազինի ածանցյալները[147,95]:



R = H, C_6H_5, 4-$CH_3OC_6H_4$; Ar = 2,4,6-$Cl_3C_6H_2$.



Ar = 2-C_6H_4N.

Ցավազրկող և հակաբորբոքիչ ազդեցությամբ աչքի են ընկել պիրազոլիլպիրիդազոնների ածանցյալները [148]:



2006 թ. եգիպտացի գիտնականները նկարագրել են, որ պիրազոլի 3-ացետիլ- և 3-էթօքսիկարբոնիլ ածանցյալները հիդրազին հիդրատի հետ էթանոլի միջավարում 8 *ժ* եռացնելիս առաջացնում են կոնդենսված պիրազոլո[3,4-d]պիրիդազիններ [149]:



R = CH_3 (ա), C_2H_5O (բ).

2007 թ. Վարդակիանը և Լոուկան ուսումնասիրել են պիրազոլիլհիդրազոնի ածանցյալի փոխազդեցությունը դիցիանմեթանի հետ: Սինթեզված միացությունը ցուցաբերել է հակամանրէային և հակասնկային ակտիվություն [150]:



Չինացի գիտնականների կողմից 3-քլոր-6-հիդրազինիլպիրիդազինի և տարբեր չհագեցած ալդեհիդների կամ էսթերների փոխազդմամբ սինթեզվել են տեղակալված պիրազոլիլպիրիդազիններ [151]:



2009 թ. Յասսինը 3-հիդրազինո-4,5,6-տրիֆենիլպիրիդազինից սինթեզել է համապատասխան պիրազոլիլ ածանցյալը, որն էլ հիմք է հանդիսացել նոր հակաբակտերիալ բարձր ակտիվությամբ օժտված միացությունների ստացման համար [152]:



Շարունակելով աշխատանքներն այդ բնագավառում Յասսինը բազմափուլ սինթեզի միջոցով իրականացրել է պիրազոլիլպիրիդազինների նոր ածանցյալների սինթեզ: Վերջիններիս գերակշռող մասն օժտված են հակաբորբոքիչ, հակաքաղցկեղային և հակահիպերտենզիվ հատկություններով [153]:



2010 թ. եգիպտացի գիտնականները 3-քլորպիրիդազինի հիմքի վրա սինթեզել են 2-[6-(4-բրոմֆենիլ)պիրիդազին-3-իլ]-5-մեթիլ-2,4-դիհիդրո-3H-պիրազոլ-3-ոնը [154]:



Ar = *պ*-Br-C_6H_4 .

2012 թ. Աբդ Էլ-Գհաֆֆարը իրականացրել է պիրիդազինի թիոածանցյալի փոխազդեցությունը սալիցիլալդեհիդի հետ, որի արդյունքում ստացվել են պիրազոլի ածանցյալներ, որոնք ցուցաբերել են հակաքաղցկեղային ակտիվություն[115]:



2013 թ. Աթհերը գործընկերների հետ սինթեզել է պիրազոլիլպիրիդազինների մի շարք ածանցյալներ, որոնք ցուցաբերել են թույլ հակաբակտերիալ և հակաօքսիդանտային հատկությունները [155]:



R = H, CH$_3$, C$_6$H$_5$; R^1 = H, CH$_3$, COOC$_2$H$_5$; R^2 = H, CH$_3$, C$_6$H$_5$, OH, NH$_2$;
X = Cl, Br, NO$_2$.

Մի շարք գիտնականների կողմից իրականացվել են պիրազոլոպիրիդազինների ստացման բազմափուլ սինթեզներ և ցույց տրվել, որ այդ միացությունները ցուցաբերում են հակամանրէային և հակասնկային բարձր ակտիվություն [156]:



R = H, 2-Cl, 4-Cl, 4-F, 4-OH, 4-OCH_3, 4-CH_3, 4-$N(CH_3)_2$.

2013 թ. գիտնականներն եկել են այն համոզման, որ պիրազոլի ածանցյալները հանդես են գալիս նաև որպես թրոմբոցիտային ինհիբիտորներ [157]:



2016 թ. Մադիի և աշխատակիցների կողմից իրականացվել է կոնդենսված պիրազոլոպիրիդազինների ստացումն ինչպես սինթեզի ավանդական եղանակներով, այնպես էլ միկրոալիքային ճառագայթմամբ: Ցույց է տրվել, որ այդ նյութերը ցուցաբերում են հակամանրէային բարձր ակտիվություն [158]:



R = CH_3, OC_2H_5, թիոֆեն; X = H, *ա*-CH_3, *ա*-Cl, *ե*-CH_3 .

1.4. 1,3,4-Օքսադիազոլի ածանցյալների սինթեզը և կենսաբանական ակտիվությունը

1,3,4-Օքսադիազոլը սինթետիկ ճանապարհով ստացված հնգանդամանի հետերոցիկլիկ միացություններից է, որի 2,5-տեղակալված ածանցյալները մեծ կիրառություն ունեն բժշկության, գյուղատնտեսության և դեղարտադրության մեջ [159-168]:

Ուսումնասիրություններից պարզվել է, որ 1,3,4-օքսադիազոլային օղակի 5-րդ դիրքում տեղակալված վեցանդամանի հետերոարոմատիկ օղակ պարունակող միացու-

թյունները ցուցաբերում են կենսաբանական բարձր ակտիվություն: Մասնավորապես, պիրիդազինի ածանցյալները ցուցաբերում են հակասնկային, հակաուռուցքային, հակաբակտերիալ, հակաբորբոքիչ, ինչպես նաև պեստիցիդային, հերբիցիդային հատկություններ, օգտագործվում են որպես բույսերի աճակարգավորիչներ:

2001 թ. չինացի գիտնականներին հաջողվել է ստանալ պիրիդազոնին համակցված 1,3,4-օքսադիազոլային օղակ [169]:



Ar^1 = *o*-Cl-C_6H_4, *պ*-Cl-C_6H_4; Ar^2 = *մ*-CF_3-C_6H_4 , *o*-F-C_6H_4 .

Չինացի գիտնականները ցույց են տվել, որ երբ օքսադիազոլային օղակը համակցված է պիրիդազոնի հետ, ապա այդպիսի միացությունները հանդես են գալիս որպես ֆունգիցիդներ, ակարիցիդներ, նեմատոցիդներ և ինսեկտիցիդներ [170-172]:



Յասսինը համապատասխան թթվի հիդրազիդից ստացել է օքսադիազոլի ածանցյալներ, որոնք ցուցաբերել են հակաբորբոքիչ ակտիվություն [153,173]:





2012 թ. եգիպտացի գիտնականները նկարագրել են պիրիդազինի թիոպիրիդազիններից համապատասխան օքսադիազոլային ածանցյալների ստացումը [115], որոնք օժտված են հակաքաղցկեղային ակտիվությամբ:



2015 թ. Գադեգոնին փուլային սինթեզով ստացել է պիրիդազինիլ-1,3,4-օքսադիազոլ-2-թիոնը, որի ալկիլումից էլ՝ S-տեղակալված արգասիքներ: Վերջիններիս կենսաբանական ակտիվության հետազոտման արդյունքում պարզվել է, որ դրանք օժտված են նեմատոցիդային, հակաբակտերիալ և հակասնկային ակտիվություններով [174]:



1.5. Պիրիմիդինի և 1,3,5-տրիազինի ածանցյալների կենսաբանական հատկությունները

Երկու և երեք ազոտի ատոմներ պարունակող վեցանդամանի հետերոցիկլիկ համակարգերից պիրիմիդինի և 1,3,5-տրիազինի ածանցյալներն օժտված են բարձր ֆիզիոլոգիական ակտիվությամբ և կիրառություն են գտել բժշկության ու գյուղատնտեսության մեջ [175]:

Պիրիմիդինի օղակը մտնում է ոչ միայն բնական միացությունների (տիմին, ուրացիլ, ցիտոզին, ադենին, գուանին, տեոֆիլին, տեոբրոմին, կոֆեին, վիտամին B_1), այլ նաև բազմաթիվ դեղամիջոցների բաղադրության մեջ:

Պիրիմիդինային պեստիցիդների շարքից առավել հայտնի են պիրիմիդինդիամինի, պիրիմիդինիլօքսի(թիո)բենզոական թթվի, պիրիմիդինիլօքսիբենզիլամինի և պիրիմիդինիլսուլֆոնիլմիզանյութի շարքերի հերբիցիդները, պիրիմիդինամինի շարքի ինսեկտիցիդները և ակարիցիդները, պիրիմիդինի և դրա օրգանոֆոսֆատների շարքերի ինսեկտիցիդները: Որպես հերբիցիդներ կիրառվում են նաև 1,3,5-տրիազինի քլոր-, ֆտոր-, ալկիլ-, մեթօքսի-, մեթիլթիո- ածանցյալները: Հատկապես կիրառական կարևոր նշանակություն ունեն պիրիմիդինի և տրիազինի սուլֆոմիզանյութի շարքի [175]:

Վերջին տասնամյակում մեծ հետաքրքրություն են առաջացրել նաև պիրիդազինի և 1,3,5-տրիազինի ածանցյալները, ինչը կարելի է բացատրել նրանով, որ դրանց շարքերում հայտնաբերվել են մեծ թվով միացություններ, որոնք ունեն դեղագիտական նշանակություն [83,86,176-183]: Դրանցից մի քանիսն առաջարկվել են որպես հակացնցումային, հակաէպիլեպտիկ [184] և հակաբակտերիալ (ֆտազին, սուլֆապիրիդազին) [185] ազդեցության պատրաստուկներ, ինչպես նաև ունեն ինհիբիտորային ազդեցություն թրոմբոցիտների ագրեգացման պրոցեսի [186,187], ֆոսֆիդէսթերազի [188,189] և ՄԱՕ-ի [190] վրա:

Արտոնագրվել են այնպիսի միացություններ, որոնք կարող են ելանյութ հանդիսանալ աթերոսկլերոզի, ռևմատոիդային արթրիտի, սկլերոզի, շաքարախտի, ՁԻԱՀ-ի, ինչպես նաև ուռուցքային մի շարք հիվանդությունների բուժման նպատակով օգտագործվող նոր դեղանյութերի սինթեզի համար [191-195]: Բազմաթիվ միացություններ առաջարկվել են որպես հերբիցիդներ, ֆունգիցիդներ և ինսեկտիցիդներ [196-202]:

3-(Պիրիմիդին-4-իլ)-1-ֆենիլպիրիդազին-4(1*H*)-ոնի ածանցյալները մեծ դեր ունեն դեղագործական քիմիայում, քանի որ հանդես են գալիս որպես ինհիբիտորներ այնպիսի հիվանդությունների համար, ինչպիսիք են էպիլեպսիան, իշեմիան, ուղեղի կաթվածը, արյունազեղումները, գանգուղեղային վնասվածքները [203]:

Հայաստանի ազգային ագրարային համալսարանի (ՀԱԱՀ) Պեստիցիդների սինթեզի և բույսերի պաշտպանության պրոբլեմային լաբորատորիայում նախկինում նպատակային սինթեզների արդյունքում ստացված պիրիդազինի ածանցյալների շարքում հայտնաբերվել են աճախթանիչ հատկություններով օժտված բազմաթիվ պատրաստուկներ [204-206]:

ԳԼՈՒԽ 2

ԱԶԻՆՆԵՐԻ ՀԻՄՔԻ ՎՐԱ ՆՈՐ ՉԿՈՆԴԵՆՍՎԱԾ ԲԻ- և ՏՐԻՑԻԿԼԻԿ ՀԵՏԵՐՈՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՍԻՆԹԵԶԸ և ԴՐԱՆՑ ԱԾԱՆՑՅԱԼՆԵՐԻ ԿԵՆՍԱԲԱՆԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆԸ (ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՔՆՆԱՐԿՈՒՄ)

2.1. Պիրազոլիլպիրիդազինների կոնդենսված և չկոնդենսված համակարգերի սինթեզը և փոխարկումներն ավանդական և միկրոլիքային ճառագայթման մեթոդներով

Գրականությունից հայտնի են պիրիդազինային, պիրիմիդինային և պիրազոլային օղակ պարունակող բազմաթիվ միացություններ, որոնք ցուցաբերում են հակաբակտերիալ, հակասնկային, հակատուբերկուլյոզային, հակաբորբոքիչ, հակահիպերտենզիվ, անալգետիկ հատկություններ [23,44,114,123,130,175,207]: Պիրիդազինի, պիրիմիդինի և պիրազոլի ածանցյալների շարքում առավել շատ են այն միացությունները, որոնք մեծ կիրառություն ունեն որպես հերբիցիդներ, ինսեկտիցիդներ, ակարիցիդներ և ֆունգիցիդներ [208-213]:

ՀԱԱՀ-ի Բույսերի պաշտպանության և պեստիցիդների սինթեզի պրոբլեմային լաբորատորիայում իրականացվել են նախկինում չուսումնասիրված՝ պիրիդազինային, պիրիմիդինային և պիրազոլային օղակներ պարունակող միացությունների սինթեզի մատչելի եղանակներ, որի արդյունքում ստացվել են պեստիցիդային և աճակարգավորիչ հատկություններով օժտված մեծ թվով միացություններ [214-219], որոնց հիման վրա ստացվել է ՀՀ գյուտի 3 արտոնագիր [204-206]: Այս ամենը հիմք հանդիսացավ կենսաբանական բարձր ակտիվությամբ օժտված նոր պատրաստուկների հայտնաբերման նպատակով լայնածավալ աշխատանքներ իրականացնելու համար:

Վերջին տասնյամակում մեծ հետաքրքրություն են ներկայացնում այն միացությունները, որտեղ պիրիդազինային և պիրազոլային օղակները համակցված են միմյանց, քանզի այդպիսիք ցուցաբերում են կենսաբանական բարձր ակտիվություն: Դրա հետ

մեկտեղ գրականության մեջ սակավ են տվյալներն այս համակարգերի պեստիցիդային և աճակարգավորիչ ակտիվությունների մասին:

Ելնելով վերը նշվածից ակնհայտ է, որ պիրազոլիլպիրիդազինների կոնդենսված և ոչ կոնդենսված համակարգերի առավել խորը ուսումնասիրություններն արդիական են:

Այդ նպատակով որպես ելանյութ օգտագործվել է 3-քլոր-6-(3,5-դիմեթիլ-1*H*-պիրազոլ-1-իլ)պիրիդազինը **(1)**, որը սինթեզվել է 3-քլոր-6-հիդրազինիլպիրիդազինի և պենտան-2,4-դիոնի փոխազդեցությամբ սպիրտային միջավայրում:



1

Սինթեզված **1** միացությունը փոխազդեցության մեջ է դրվել հիդրազինհիդրատի հետ և ստացվել 3-(3,5-դիմեթիլ-1*H*-պիրազոլ-1-իլ)-6-հիդրազինիլպիրիդազինը **(2)** [220, 221]:



1 **2**

Վերջինս քացախաթթվի միջավայրում սենյակային ջերմաստիճանում 2,4-պենտան դիոնի հետ փոխազդելիս ենթարկվում է հետերոցիկլման և առաջացնում եռցիկլիկ 3,6-բիս(3,5-դիմեթիլ-1*H*-պիրազոլ-1-իլ)պիրիդազին **(3)** [220,221].



2 **3**

Ի տարբերություն վերը նշվածի, **2** միացությունը ացետոքացախաթթվի էթիլ էսթերի հետ էթանոլի միջավայրում ռեակցելիս առաջացնում է **4** հիդրազոնոբութանատը, որը հետագայում հիմնային միջավայրում 3 *մ* եռացնելիս վեր է ածվում ցիկլիկ արգա-

սիքի՝ 1-(6-(3,5-դիմեթիլ-1*H*-պիրազոլ-1-իլ)պիրիդազին-3-իլ)-3-մեթիլ-1*H*-պիրազոլ-5-ոլի (**5**) [220,221]:



2 **4** **5**

Գրականությունից հայտնի են [1,2,4]տրիազոլո[4,3-b]պիրիդազինների [222,223] կոնդենսված ածանցյալները, որոնց շարքում հայտնաբերվել են հակասնկային [224], հակահիպերտենզիվ [225] և հակացնցումային [226] ակտիվությամբ օժտված միացություններ, ինչպես նաև ֆոսֆոդիէսթերազի ինհիբիտորներ [227], ԳԱԲԹ(գամմաամինոբութանաթթու) պարունակող α2- և α3- ռեցեպտորների ընտրողական ագոնիստներ [228]: Ուստի մեծ հետաքրքրություն էր ներկայացնում նմանատիպ միացությունների սինթեզը և դրանց կենսաբանական ակտիվության ուսումնասիրությունը:

Նպատակային կոնդենսված համակարգերի սինթեզն իրականացվել է **2** միացությունը քացախաթթվում եռացնելով: Արդյունքում ստացվել է 6-(3,5-դիմեթիլ-1*H*-պիրազոլ-1-իլ)-3-մեթիլ[1,2,4]տրիազոլո[4,3-*b*]պիրիդազինը **(6)** [221,229]:



2 **6**

Շարունակելով հետազոտություններն ելային **2** հիդրազիդը բացարձակ էթանոլի միջավայրում, հիմքի և CS_2-ի ավելցուկի ներկայությամբ, ներմոլեկուլային ցիկլման արդյունքում առաջացրել է եռցիկլիկ կոնդենսված 6-(3,5-դիմեթիլ-1*H*-պիրազոլ-1-իլ)-[1,2,4]տրիազոլո[4,3-b]պիրիդազին-3(2H)-թիոնը **(7)**, որը կարող է հիմք հանդիսանալ կենսաբանորեն ակտիվ նոր միացությունների սինթեզի համար [221,229]:



2 **7**

Ցույց է տրվել, որ **7** միացության կալիումական աղը մեղմ պայմաններում ենթարկվում է ալկիլման ԴՄՖԱ-ում զանազան ալկիլ հալոգենիդներով և հալոգենքացաթթվի ածանցյալներով:



7 **8ա-ե**

R = CH_3 (**ա**), CH_2CONH_2 (**բ**), CH_2COOMe (**գ**), $CH_2CH_2OC_6H_5$ (**դ**), $CH(COCH_3)_2$ (**ե**) .

7 Միացությունը կարող է գտնվել թիոլային կամ թիոնային տաուտոմերային ձևերում: Այդ միացության ՄՄՌ ^{13}C սպեկտրում 161.81 մ.բ.-ի տիրույթում դիտվում է C=S կրկնակի կապի ածխածնի ատոմի ազդանշանն, իսկ ^{1}H ՄՄՌ սպեկտրում շարժուն ջրածնի կլանումն ի հայտ է գալիս 14.6 մ.բ.-ում, որը համապատասխանում է NH խմբի ջրածնի ատոմի ազդանշանին: Այս փաստերն ապացուցում են ելանյութի թիոնային կառուցվածքը: Սակայն, ակիլման ռեակցիաներն ընթանում են թիոլային ձևի ծծմբի ատոմի մոտ, քանի որ ՄՄՌ ^{13}C սպեկտրում C=S կրկնակի կապի ածխածնի ատոմի ազդանշանն անհետանում է և դիտվում են S-ալկիլ խմբերին բնորոշ նոր կլանումներ [221]:

Նախկինում կատարված հետազոտությունների ժամանակ ցույց էր տրվել, որ թիոպիրիդազինների ածանցյալների շարքում առկա են բարձր աճակարգավորիչ ակտիվությամբ օժտված միացություններ [204-206]: Ելնելով վերը նշվածից հետաքրքիր էր իրականացնել ելային **1** պիրազոլիլքլորպիրիդազինի փոխարկումը **10** թիոպիրազոլիլպիրիդազինի: Այդ նպատակով մեր կողմից նախկինում մշակված մեթոդով [217,230] իրականացվել է թիոմիզանյութի և **1** միացության փոխազդմամբ միջանկյալ **9** թիուրոնիումային աղի սինթեզն, որի քայքայումը հիմքով հանգեցրել է համապատասխան 6-(3,5-դիմեթիլ-1*H*-պիրազոլ-1-իլ)պիրիդազին-3(2*H*)-թիոնի **(10)**:



1 **9** **10**

Ցույց է տրվել, որ վերջինիս կալիումական աղը հեշտությամբ ենթարկվում է ալկիլման: Մասնավորապես, մեթիլումը դիմեթիլսուլֆատով ընթանում է սենյակային ջերմաստիճանում ջրային միջավայրում, որը հանգեցնում է սպասվող **11ա** S-մեթիլային արգասիքի, իսկ ռեակցիան քլորքացախաթթվի հետ տարվել է սպիրտային միջավայրում և արդյունքում ստացվել է **11բ** միացությունը: Ալկիլման մյուս ռեակցիաներն իրականացվել են ԴՄՖԱ-ի միջավայրում հանգեցնելով համապատասխան **11գ-զ** 3-(3,5-դիմեթիլ-1*H*-պիրազոլ-1-իլ)-6-(ալկիլթիո)պիրիդազինների առաջացմանը [220,221]**:**



R = CH_3 (ա), CH_2COOH (բ), CH_2CONH_2 (գ), CH_2COOCH_3 (դ), $CH_2COOC_2H_5$ (ե), $CH(COCH_3)_2$ (զ).

Ինչպես **7** միացությունում, այնպես էլ 6-(3,5-դիմեթիլ-1*H*-պիրազոլ-1-իլ)պիրիդազին-3(2*H*)-թիոնում **(10)** առկա է թիոն-թիոլային տաուտոմերիա: Այս դեպքում նույնպես ալկիլման ռեակցիաներն ընթանում են SH խմբի ջրածնի հաշվին, որը կրկին հաստատվել է ՄՄՌ ^{1}H և ^{13}C սպեկտրների տվյալների հիման վրա [221]:

Նշված բոլոր փոխարկումներն իրականացվել են սինթեզի ավանդական մեթոդներով, սակայն վերջին տարիներին կենսաբանորեն ակտիվ հետերոցիկլիկ միացությունների սինթեզի համար հաճախ օգտագործվում է ''Կանաչ քիմիայի'' պահանջներին բավարարող էկոլոգիապես անվնաս և արդյունավետ միկրոալիքային (ՄԱ) ճառագայթման մեթոդը [231,232], որն ունի մի շարք առավելություններ, ինչպիսիք են ռեակցիաների կարճ տևողությունը, բարձր ելքերը, առավել մաքուր միացությունների ստացումը և էլեկտրաէներգիայի խնայումը: Այդ իսկ պատճառով հետաքրքիր էր համեմատել ավանդական և ՄԱ ճառագայթման մեթոդներով պիրիդազինի և պիրազոլիլպիրիդազինների հիման վրա սինթեզված նոր երկ- և եռցիկլիկ հետերոհամակարգերի ստացումն, ինչպես նաև իրականացված է ՄԱ մեթոդի էֆեկտիվության գնահատումը տարաբնույթ սինթեզների ժամանակ [221,233]:

Աղյուսակում 1-ում բերված են նշված մեթոդով այդ ռեակցիայի իրականացման պայմանները, ըստ որի հիմնականում ՄԱ ճառագայթման ժամանակ ռեակցիայի տևողու-

թյունը, որպես կանոն, կտրուկ կրճատվում է, իսկ վերջնանյութերի ելքերը բարձրանում են: ՄԱ ճառագայթման մեթոդի ամենաբարձր արդյունավետությունն ակնհայտ է դառնում այն դեպքերում, երբ համապատասխան ավանդական սինթեզն ընթանում է բարձր ջերմաստիճանային պայմաններում և ժամանակի բավական մեծ տևողությամբ:

Աղյուսակ 1

1-11 Միացությունների սինթեզի ավանդական մեթոդների համեմատումը ՄԱ ճառագայթման մեթոդի հետ

Միացություն	Ավանդական մեթոդներ		Միկրոալիքային ճառագայթում	
	Ջերմաստիճան, ^0C (ռեակցիայի տևողություն)	Ելք, %, (լուծիչ)	ռեակցիայի տևողություն (*րոպե*)	Ելք, %, (լուծիչ)
1	78-80, (5 *ժ*)	84, (C_2H_5OH)	10	92, (C_2H_5OH)
2	110-115 , (10 *ժ*)	82, (դիօքսան)	30	88, (դիօքսան)
3	25, (24 *ժ*)	85, (CH_3COOH)	10	85, (CH_3COOH)
4	25, (24 *ժ*)	96, (CH_3COOH)	3	0*, (CH_3COOH)
5	90-95, (3 *ժ*)	60, (H_2O)	30	60, (CH_3COOH)
6	115-118, (8 *ժ*)	59, (CH_3COOH)	30	90, (CH_3COOH)
7	75-80, (10 *ժ*)	81, (CS_2 , C_2H_5OH)	3	0*,(CS_2, C_2H_5OH)
8ա	50-55, (4-5 *ժ*)	77, (ԴՄՖԱ)	15	84, (ԴՄՖԱ)
8բ	55-60, (6-8 *ժ*)	63, (ԴՄՖԱ)	10	67, (ԴՄՖԱ)
8գ	55-60, (6-8 *ժ*)	50, (ԴՄՖԱ)	15	67, (ԴՄՖԱ)
8դ	40-45, (3-5 *ժ*)	58, (ԴՄՖԱ)	15	81, (ԴՄՖԱ)
8ե	40-45, (3-5 *ժ*)	62, (ԴՄՖԱ)	3	0*, (ԴՄՖԱ)
9	55-60, (3-5 *ժ*)	92, (ացետոն)	3	0*, (ացետոն)
10	25, (1 *ժ*)	80, (H_2O)	10	76, (H_2O)
11ա	25, (24 *ժ*)	87, (H_2O)	15	95, (H_2O)
11բ	78-80, (2 *ժ*)	77, (C_2H_5OH)	30	77, (C_2H_5OH)
11գ	50-55, (3 *ժ*)	70, (ԴՄՖԱ)	10	88, (ԴՄՖԱ)
11դ	50-55, (3 *ժ*)	70, (ԴՄՖԱ)	10	74, (ԴՄՖԱ)
11ե	50-55, (3 *ժ*)	86, (ԴՄՖԱ)	10	35, (ԴՄՖԱ)
11զ	25, (24 *ժ*)	80, (ԴՄՖԱ)	3	0*, (ԴՄՖԱ)

*Ռեակցիայի արգասիքի խեժացում:

2.2. Պիրազոլիլթիոպիրիդազինների և պիրազոլիլօքսիպիրիդազինների ածանցյալների սինթեզը և փոխարկումները

Պիրազոլիլթիոպիրիդազինների շարքն ընդլայնելու նպատակով իրականացվել է **10** մերկապտոածանցյալի փոխազդեցությունը 2,4-դիքլոր-6-մեթիլպիրիմիդինի հետ: Ռեակցիան տարվել է ինչպես ԴՄՖԱ-ի միջավայրում, այնպես էլ ացետոն-ջուր համակարգում, որի արդյունքում ստացվել է եռցիկլիկ 3-((2-քլոր-6-մեթիլպիրիմիդին-4-իլ)-թիո)-6-(3,5-դիմեթիլ-1*H*-պիրազոլ-1-իլ)-պիրիդազինը **(12)** [234]:



10 **12**

Սինթեզված միացության կառուցվածքն ապացուցելու համար կատարվել են սպեկտրային ուսումնասիրություններ և հաստատվել է, որ տեղակալման ռեակցիան ընթանում է պիրիմիդինային օղակի չորրորդ դիրքի քլորի ատոմի հաշվին [235]: Հայտնի է, որ երբ քլորի ատոմը տեղակալվում է S-ալկիլ կամ S-ֆենիլ ռադիկալով, ապա ՄՄՌ ^{13}C սպեկտրում հետերոցիկլի այդ խմբին միացած ածխածնի ատոմի (C-2 կամ C-4) քիմիական շեղումը պետք է տեղաշարժվի առնվազն 4 մ.բ.-ով դեպի թույլ դաշտը [236]: C-4-ի ազդանշանը հստակ վերծանվում է ^{13}C ՄՄՌ սպեկտրում, որը գրանցվել է առանց սպին-սպինային փոխազդեցության ճնշման: Սպեկտրում C-4-ի ազդանշանն ունի դուպլետային բնույթ (^{2}J=2.1 Հz), որը պայմանավորված է C-5-ի ջրածնի ատոմի հետ փոխազդմամբ: Քանի որ արգասիքի C-4 ածխածնի ատոմի ազդանշանը ՄՄՌ ^{13}C սպեկտրում շեղվում է դեպի թույլ դաշտ 6 մ.բ.-ով, կարելի է փաստել, որ տեղակալումն ընթացել է չորրորդ դիրքի քլորի ատոմի մոտ:

Հայտնի է, որ օրգանական դիսուլֆիդները կիրառվում են օրգանական սինթեզում ներկանյութերի, դեղանյութերի և պեստիցիդների ստացման համար: Որոշ դիսուլֆիդներ օգտագործվում են կաուչուկների վուլկանացումն արագացնելու համար: Գյուղատնտեսության մեջ հայտնի են դիսուլֆիդային կամրջակով մի շարք պատրաստուկներ, որոնք օժտված են կենսաբանական բարձր ակտիվությամբ [237,238]: Այդ նպա-

տակով մշակվել է մեթոդ, ըստ որի իրականացվել է **10** միացության դիմերումը քացախաթթվի միջավայրում, նատրիումի նիտրիտի ներկայությամբ, սենյակային ջերմաստիճանում, որի արդյունքում ստացվել է 1,2-բիս(6-(3,5-դիմեթիլ-1*H*-պիրազոլ-1-իլ)պիրիդազին-3-իլ)դիսուլֆանը **(13)** [234]:



10 **13**

Ինչպես արդեն նշվեց, **10** միացության կալիումական աղի ալկիլումն ընթանում է թիոլային տաուտոմերի ծծմբի ատոմի մոտ: Բավական մեղմ պայմաններում (սենյակային ջերմաստիճան, ԴՄՖԱ) այդ աղի և 3-քլորպենտան-2,4-դիոնի փոխազդեցությունից ստացվում է **11q** միացությունը [234,242]:



10 **11q**

Ցույց է տրվել, որ սինթեզված **11q** դիկետոածանցյալը փոխազդելով հիդրազինսուլֆատի հետ ենթարկվում է հետերոցիկլման՝ առաջացնելով համապատասխան **14** NH-պիրազոլիլ ածանցյալը, մեթիլհիդրազինսուլֆատի հետ առաջացնում է **15** N-մեթիլ ածանցյալը, իսկ ազինիլհիդրազինների հետ թթվային միջավայրում՝ համապատասխան **16-20** N-ազինիլտեղակալված ածանցյալները [234,242]:



11q **14-20**

14 R = H; **15** R = CH_3; **16** R = H_3CO N N NH_2; **17** R = C_2H_5HN N N NHC_2H_5;

18 R = $(CH_3)_2N$ N N $N(CH_3)_2$; **19** R = CH_3HN N N CH_3; **20** R = H_2N N N CH_3.

17 Միացությունը ստացվել է նաև հանդիպակաց սինթեզով: Տրիազինի չորրորդային ամոնիումային աղերը փոխազդում են պիրիազոլիլթիոպիրիդազինիլպիրազոլի N-կալիումական աղի հետ և առաջացնում համապատասխան N-տեղակալված տրիազինիլ ածանցյալ: Այս փաստը հաստատվել է ՄՄՌ սպեկտրային տվյալներով, ըստ որի երկու մեթոդով սինթեզված միացություններն նույնն են [234]:



14 **17**

2.3. S, N, O – Տեղակալված պիրիդազինիլացետոհիդրազիդների հիման վրա պիրազոլիլ և օքսադիազոլիլ ածանցյալների սինթեզը և փոխարկումները

Հետագա ուսումնասիրությունների ժամանակ հետաքրքիր էր իրականացնել այնպիսի սինթեզներ, որտեղ պիրազոլային օղակը միացած է պիրիդազինին ոչ թե ծծմբի, այլ թթվածնի ատոմի միջոցով:

Որպես ելանյութ օգտագործվել է 6-օքսո-1-ֆենիլ-1,6-դիհիդրոպիրիդազին-3-ոլի կալիումական աղը **(21)** [54]: Այդ աղի և 3-քլորպենտան-2,4-դիոնի փոխազդեցությունից ստացվել է **22** դիկետոօքսիպիրիդազինը: Վերջինս հիդրազինսուլֆատի, մեթիլհիդրազինսուլֆատի, ֆենիլհիդրազինի և տրիազինիլհիդրազինների հետ փոխազդեցության արդյունքում ենթարկվել է հետերոցիկլման և ստացվել են **23ա-գ** պիրազոլիլօքսիպիրիդազինները և դրանց **23դ-զ** N-տեղակալված ածանցյալները [239,240]:



21 **22** **23ա-զ**

R = H (**ա**), CH_3 (**բ**), C_6H_5 (**գ**),  (**դ**),  (**ե**),  (**զ**).

Իրականացվել են 6-((3,5-դիմեթիլ-1H-պիրազոլ-4-իլ)օքսի)-2-ֆենիլպիրիդազին-3-(2H)-ոնի **(23ա)** փոխարկումները [239,240]: Մասնավորապես, ցույց է տրվել, որ ացետոնի միջավայրում KOH-ի ներկայությամբ 1,3,5-տրիազինների չորրորդային ամոնիումային աղերի հետ 60-65 ^{0}C-ում տաքացնելիս, ինչպես **14** թիոպիրիդազինի, այնպես էլ օքսիպիրիդազինների ժամանակ առաջանում են երեք տարբեր հետերոցիկլեր պարունակող **24ա,բ** միացությունները, իսկ ալկիլող ռեագենտների ազդեցությամբ ԴՄՖԱ-ի միջավայրում, հիմքի ներկայությամբ տաքացնելիս առաջացնում է **25ա-գ** N-ալկիլ տեղակալված ածանցյալներ:



25ա-գ **23ա** **24ա,բ**

24 $R^1 = N(CH_3)_2$, $R^2 = NH_2$ **(ա)**; $R^1 = R^2 = NHC_2H_5$ **(բ)**; **25** R = $C_6H_5O(CH_2)_2$ **(ա)**, 2-$CH_3C_6H_4O(CH_2)_2$ **(բ)**, $CH_2C(O)NH_2$ **(գ)**. Hal = Br **(ա)**, Br **(բ)**, Cl **(գ)**.

Ուսումնասիրվել է նաև **23ա** միացության փոխազդեցությունն արիլիզոցիանատների հետ պիրիդինի կատալիտիկ քանակների ներկայությամբ, որը հանգեցրել է համապատասխան **26ա-գ** կարբօքսամիդո ածանցյալների առաջացմանը, իսկ սենյակային ջերմաստիճանում, պիրիդինի միջավայրում բենզոիլքլորիդի ազդեցության տակ հեշտությամբ ենթարկվում է N-ացիլման, որի արդյունքում ստացվում է համապատասխան 6-((1-բենզոիլ-3,5-դիմեթիլ-1H-պիրազոլ-4-իլ)օքսի)-2-ֆենիլպիրիդազին-3(2*H*)-ոնը **(27)**:



27 **23ա** **26ա-գ**

Ar = C_6H_5 **(ա)**, 3-ClC_6H_4 **(բ)**, 3,4-$Cl_2C_6H_3$ **(գ)**.

Վերը նշված աշխատանքը 2016 թ. ներկայացվել է Չեխիայում տեղի ունեցած միջազգային գիտաժողովում և արժանացել առաջին կարգի դիպլոմի[239]:

Շարունակելով աշխատանքները հետաքրքիր էր ուսումնասիրել նաև այն միացությունները, որտեղ պիրիդազինային օղակը միացած է ացետոհիդրազինիլ խմբին

ծծմբի, ազոտի կամ թթվածնի ատոմի միջոցով և ուսումնասիրել հետերոատոմների ազդեցությունը նյութերի կենսաբանական հատկությունների վրա: Այդ նպատակով օգտագործվել են նախկինում սինթեզված **28-38** էսթերները [215,216], որոնք 63 %-ng հիդրազինհիդրատի հետ փոխազդելիս էթանոլի կամ իզոպրոպանոլի միջավայրում 20 ^{0}C-ում առաջացնում են համապատասխան **39-49** հիդրազիդները [233,241]:



39 X = OC_2H_5;
40 X = պիրազոլիլ.

41 R = H; Ar = C_6H_5;
42 R = CH_3, Ar = C_6H_5.
43 R = H, Ar = 4-Cl-$C_6H_4CH_2$;

44 R^1= C_2H_5NH, R^2 = 4-մորֆոլիլ; **47** R^1= CH_3NH, R^2 = 4-մորֆոլիլ;
45 R^1= R^2 = *իզո*-C_3H_7NH; **48** R^1= $(C_2H_5)_2N$, R^2 = 4-մորֆոլիլ;
46 R^1= C_4H_9NH, R^2 = 4-մորֆոլիլ; **49** R^1= R^2 = $(CH_3)_2N$.

Մշակվել են սինթեզված **41,46-49** ացետոհիդրազիդների հետերոցիկլման օպտիմալ պայմանները, ըստ որի վերջիններս քացախաթթվի միջավայրում փոխազդեցության մեջ դնելով պենտան-2,4-դիոնի հետ առաջացնում են համապատասխան **50-54** պիրազոլիլ ածանցյալները [240]:



51 R^1= C_4H_9NH, R^2 = 4-մորֆոլիլ; **53** R^1= $(C_2H_5)_2N$, R^2 = 4-մորֆոլիլ;
52 R^1= CH_3NH, R^2 = 4-մորֆոլիլ; **54** R^1= R^2 = $(CH_3)_2N$.

Հետաքրքիր էր նաև սինթեզված ացետոհիդրազիդների հիման վրա ստանալ միացությունների այնպիսի համակարգ, որտեղ պիրիդազինային ցիկլը համակցված կլինի 1,3,4-օքսադիազոլային օղակի հետ, քանի որ ըստ գրականության տվյալների համակցված այդպիսի ածանցյալները ցուցաբերում են հակաբորբոքիչ, հակամիկրոբային և հակացնցումային հատկություններ, ինչպես նաև հերբիցիդային և ֆունգիցիդային ակտիվություն: Այդ նպատակով ստացված ացետոհիդրազիդները փոխազդելով CS_2-ի հետ KOH-ի սպիրտային միջավայրում ենթարկվել են հետերոցիկլման [233,241,243]:

Սինթեզված **55-59** միացությունների ալկիլման համար մշակվել են օպտիմալ պայմաններ և ցույց է տրվել, որ փոխարկումներն հիմանականում ընթանում են սենյակային ջերմաստիճանում, ԴՄՖԱ-ջուր խառնուրդում, բացառությամբ **64դ, 64ե, 65դ, 66դ** միացությունների, որոնք ստացվել են 55-60 ^{0}C-ում 4-6 *ժ* տաքացնելիս [233, 241, 243]:



R^3 = CH_3 (ա), $CH_2COOC_2H_5$ (բ), CH_2COOCH_3 (գ), CH_2CONH_2 (դ), $C_6H_5O(CH_2)_2$ (ե) .

1,3,4-Օքսադիազոլ-2-թիոնային ֆրագմենտի և համապատասխան S-տեղակալված ածանցյալների տաուտոմերային կառուցվածքը հաստատվել է ՄՄՌ ^{13}C սպեկտրների տվյալներով: Ելային **55-62** միացությունների սպեկտրներում 177 մ.բ.-ի տիրույթում դիտվում է C=S կրկնակի կապի ածխածնի ատոմի ազդանշանը, ինչը հաստատում է դրանց թիոնային կառուցվածքը: Ալկիլման ժամանակ տեղակալումն ընթանում է թիոլային ձևի ծծմբի ատոմի մոտ, քանի որ ալկիլածանցյալների սպեկտրներում այդ կլանումն անհետանում է և ի հայտ են գալիս S-ալկիլ խմբերին բնորոշ ազդանշանները [233,241]:

2.4. N-Ֆենիլպիրիդազինի որոշ ածանցյալների սինթեզի ավանդական և միկրոալիքային ճառագայթման մեթոդների համեմատումը

Ինչպես արդեն նշվել է սինթեզի միկրոալիքային ճառագայթման մեթոդն, ի համեմատ ավանդական սինթեզի մեթոդի, ունի մի շարք առավելություններ, ուստի հետաքրքիր էր նկարագրված միացությունների սինթեզն իրականացնել նաև ՄԱ ճառագայթման մեթոդով [233,241], որոնց տվյալները բերված են աղյուսակ 2-ում:

Աղյուսակ 2

41,42,65ա,65գ,65դ,66գ,66դ Միացությունների սինթեզի ավանդական մեթոդների համեմատումը ՄԱ ճառագայթման մեթոդի հետ

Միացություն	Նյութի կառուցվածքը	Ավանդական մեթոդներ		Միկրոալիքային ճառագայթում	
		Ջերմաստիճան, ^{0}C (ռեակցիայի տևողություն)	Ելք, %, (լուծիչ)	ռեակցիայի տևողություն (*րոպե*)	Ելք, %, (լուծիչ)
41		Սենյակ. ջերմ. (15 *ժ*)	73 (*իզոՊrOH*)	6	84 (C_2H_5OH)
42		Սենյակ. ջերմ. (15 *ժ*)	83 (*իզոՊrOH*)	12	77 (C_2H_5OH)
65ա		0 (3 *ժ*)	79 (H_2O)	3	0* (H_2O)
65գ		0 (3 *ժ*)	44 (ԴՄՖԱ)	3	0* (ԴՄՖԱ)
65դ		55-60 (4-6 *ժ*)	43 (ԴՄՖԱ)	17	75 (ԴՄՖԱ)
66գ		0 (3 *ժ*)	95 (ԴՄՖԱ)	3	0* (ԴՄՖԱ)
66դ		55-60 (4-6 *ժ*)	54 (ԴՄՖԱ)	10	60 (ԴՄՖԱ)

*Ռեակցիայի արգասիքի խեժացում:

Աղյուսակ 2-ում բերված են ռեակցիայի պայմանները, ըստ որի ՄԱ ճառագայթման ժամանակ ռեակցիայի տևողությունը կտրուկ կրճատվում է, իսկ վերջնանյութերի ելքերը համեմատաբար բարձրանում են:

2016 թ. նշված աշխատանքը Տաջիկստանում տեղի ունեցած միջազգային գիտաժողովում արժանացել է առաջին կարգի դիպլոմի[241]:

2.5. Ազինիլօքսիպիրիդազինների նոր ածանցյալների սինթեզը

Ազինների (տրիազինի և պիրիմիդինի) ածանցյալների շարքում հայտնի են բազմաթիվ ֆիզիոլոգիապես ակտիվ միացություններ, որոնք կիրառվում են ինչպես բժշկության, այնպես էլ գյուղատնտեսության մեջ [175-202], ուստի նպատակահարմար էր ընդլայնել տարբեր ազինային հետերոցիկլերի համադրությամբ միացությունների շրջանակը: Ելնելով դրանից, օգտագործելով նախկինում մշակված մեթոդն [214], իրականացվել է 6-հիդրօքսիպիրիդազին-3(2*H*)-ոնի **(67)** և դրա 2-N-տեղակալված ածանցյալների **(68-70)** ռեակցիան 2-մեթօքսի(դիալկիլամինո)-4-ամինո-1,3,5-տրիազինի տրիմեթիլամոնիումային աղերի հետ, որի արդյունքում ստացվել են **71-78** 1,3,5-տրիազինիլօքսիպիրիդազինի ածանցյալները [244].



67-70 **71-78**

67 $R^1 = H$;
68 $R^1 = CH_3$;
69 $R^1 = C_6H_5$;
70 $R^1 = C_6H_5O(CH_2)_2$.

71 $R^1 = H$, $R = OCH_3$;
72 $R^1 = CH_3$, $R = OCH_3$;
73 $R^1 = C_6H_5$, $R = OCH_3$;
74 $R^1 = C_6H_5O(CH_2)_2$, $R = OCH_3$.

75 $R = N(CH_3)_2$, $R^1 = H$;
76 $R = N(CH_3)_2$, $R^1 = CH_3$;
77 $R = N(CH_3)_2$, $R^1 = C_6H_5$;
78 $R = N(CH_3)_2$, $R^1 = C_6H_5O(CH_2)_2$.

Տեսական հետաքրքրություն էր ներկայացնում ուսումնասիրել **75** միացության ալկիլման ռեակցիան, քանի որ օքսիպիրիդազինային օղակը կարող է գտնվել երկու տարբեր տաուտոմերային ձևերում (**Ա** և **Բ**) և ալկիլման ռեակցիան կարող է ընթանալ ինչպես թթվածնի, այնպես էլ ազոտի ատոմի մոտ:

ՄՄՌ ^{1}H սպեկտրային տվյալների հիման վրա հաստատվել է, որ **75** միացությունում տեղակալումն ընթանում է պիրիդազինային ցիկլի ազոտի ատոմի մոտ (**Ա** ձև), քանի որ **78-82** ալկիլված արգասիքների ՄՄՌ ^{1}H սպեկտրներում 4.38-4.68 մ.բ. տիրույթում դիտվող ազդանշանները համապատասխանում են ներմուծվող տեղակալիչների 2-N-մեթիլենային խմբերին: Ալկիլման դիրքն ապացուցվել է նաև հանդիպակաց սինթեզով **78** միացության օրինակով [244]:



Միացությունների երկրորդ ազինային օղակի ազդեցությունը կենսաբանական հատկությունների վրա ուսումնասիրելու համար 1,3,5-տրիազինային ցիկլը փոխարինվել է պիրիմիդինային հետերոցիկլով: Այդ նպատակով լաբորատորիայում նախկինում սինթեզված **83-85** պիրիդազինիլօքսիացետոքացախաթթվի էսթերները [214] փոխազդման մեջ են դրվել գուանիդինի հիդրոքլորիդի հետ, որի արդյունքում ստացվել են **86-88** պիրիդազինիլօքսիպիրիմիդինները, որոնց կառուցվածքն ապացուցվել է սպեկտրային տվյալներով:



86 R^1 = H; **87** R^1 = CH_3; **88** R^1 = C_6H_5.

2.6. 4-Հիդրազինիլ-6-մեթիլ-2-(ալկիլթիո)պիրիմիդինների հիման վրա ացիկլիկ, չկոնդենսված և կոնդենսված հետերոհամակարգերի սինթեզը

Միացությունների կառուցվածքի և դրանց կենսաբանական ակտիվությունների միջև եղած կապի ուսումնասիրման նպատակով հետագա աշխատանքները շարունակվել են պիրիմիդինի հետ ացիկլիկ և կոնդենսված հետերոհամակարգերի համադրությամբ նոր ածանցյալների նպատակային սինթեզների ուղղությամբ, որոնց մոլեկուլներում բացակայում է պիրիդազինային օղակը: Որպես ելանյութ օգտագործվել է 2-մերկապտո-6-մեթիլպիրիմիդին-4-ոլը, որն ստացվել է հայտնի եղանակով [249].



89,90

89 R = CH_3; **90** R = $CH_2C_6H_5$.

Ելային 2-մերկապտո-6-մեթիլպիրիմիդին-4-ոլը պարունակում է ջրածնի երկու շարժուն ատոմ, հետևաբար այն կարող է հանդես գալ տարբեր տաուտոմերային ձևերով, իսկ դրա ալկիլումը կարող է ընթանալ S, O և N հետերոատոմների մոտ: Բազմաթիվ փորձերի արդյունքում մշակվել են օպտիմալ պայմաններ ընտրողական ալկիլում իրականացնելու համար: NaOH-ի ջրային լուծույթում դիմեթիլսուլֆատի կամ բենզիլքլորիդի փոխազդեցությամբ ռեագենտների 2:1:1 հարաբերակցությամբ հաջողվել է բարձր ել-քերով (83-87%) իրականացնել **89,90** 2-S-տեղակալված ածանցյալների սինթեզը: Ստացված միացությունների քլորացումը $POCl_3$-ով բերում է 2-(մեթիլթիո)-4-քլոր-6-մեթիլպիրիմիդինի **(91)** և 2-(բենզիլթիո)-4-քլոր-6-մեթիլպիրիմիդինի **(92)** առաջացմանը: Վերջիններս 63%-ոց հիդրազինհիդրատի ավելցուկով վեր են ածվել համապատասխան **93,94** հիդրազինիլ ածանցյալների [245]:



89,90 **91,92** **93,94**

89,91,93 R = CH_3; **90,92,94** R = $CH_2C_6H_5$.

Ստացված հիդրազինիլ ածանցյալների հետ իրականացվել են մի շարք փոխարկումներ, մասնավորապես, տոլուոլի միջավայրում, պիրիմիդինի կատալիտիկ քանակների ներկայությամբ ֆենիլիզոցիանատի և ֆենիլիզոթիոցիանատի հետ տաքացնելիս գոյանում են համապատասխան **95,96** սեմիկարբազիդները և **97,98** թիոսեմիկարբազիդները [245]:



95,97 R = CH_3; **96,98** R = $CH_2C_6H_5$.

Նույն հիդրազինիլպիրիմիդինները էթիլացետատի միջավայրում քացախաթթվի անհիդրիդի հետ 5 *ժ* 50-60 ^{0}C տաքացնելիս առաջացնում են **99,100** N'-(6-մեթիլ-2-մեթիլ-թիո(բենզիլթիո)պիրիմիդին-4-իլ)ացետոհիդրազիդներ [245]:



99 R = CH_3; **100** R = $CH_2C_6H_5$.

Պիրիմիդինի հետ կոնդենսված հետերոցիկլեր ստանալու նպատակով **93,94** ելային հիդրազինները KOH-ի սպիրտային լուծույթում փոխազդեցության մեջ է դրվել CS_2-ի հետ: Քանի որ ռեակցիան իրականացվել է CS_2-ի ավելցուկի պայմաններում, կարելի էր ենթադրել, որ փոխազդեցությունը կարող է ընթանալ և' 1:1 և' 1:2 հարաբերակցությամբ: Փորձերը ցույց են տվել, որ 2-S-մեթիլ ածանցյալի ներմոլեկուլային ցիկլումն ընթանում է նույնիսկ սենյակային ջերմաստիճանում, իսկ 2-S-բենզիլ ածանցյալինը՝ սպիրտային միջավայրում 2-3 *ժ* տաքացման պայմաններում:

Սպեկտրային անալիզի տվյալները (ՄՄՌ ^{1}H և ^{13}C, մասս-սպեկտր) փաստում են, որ ռեակցիան ընթանում է ռեագենտների 1:1 հարաբերակցությամբ, այնուհետև տեղի է ունենում ներմոլեկուլային ցիկլում և արդյունքում առաջանում են կոնդենսված բիցիկլիկ **101** կամ **102** միացությունները: Վերջիններս կարող են հանդես գալ թիոնային կամ թիոլային տաուտոմերային ձևերով:



93,94

103ա-ե, 104ա-ե

93,101,103 R = CH_3; **94,102,104** R = $CH_2C_6H_5$;
R^1 = CH_3 (ա), C_3H_7 (բ), $CH_2C_6H_5$ (գ), CH_2COOCH_3 (դ), $CH_2CH_2OC_6H_5$ (ե).

Երբ իրականացվում է այս միացությունների ալկիլումն, ապա բարձր ելքերով (65-98%) առաջանում են միայն 3-S-տեղակալված **103,104** ածանցյալները, որոնց կառուցվածքը հաստատվել է ռենտգենկառուցվածքային անալիզի տվյալներով (նկ.1)[245]:



Նկար 1. 7-Մեթիլ-3,5-բիս(մեթիլթիո)-[1,2,4]տրիազոլո[4,3-c]պիրիմիդինի **(103ա)** կառուցվածքն ըստ ՌԿԱ-ի:

Ուսումնասիրվել է նաև ելային հիդրազինների հետերոցիկլումը պենտան-2,4-դիոնի և մալեինանհիդրիդի ազդեցությամբ, ինչը հանգեցրել է **105,106** 4-(3,5-դիմեթիլ-1*H*-պիրազոլ-1-իլ)-6-մեթիլ-2-(ալկիլթիո)պիրիմիդինների և **107,108** 6-հիդրոքսի-2-(6-մեթիլ--2-(ալկիլթիո)պիրիմիդին-4-իլ)պիրիդազին-3(2*H*)-ոնների առաջացմանը [245]:



105,106 **93,94** **107,108**

105,107 R = CH_3; **106,108** R = $CH_2C_6H_5$.

2.7. Թիազոլոպիրիմիդինների սինթեզը և փոխարկումները

Կոնդենսված համակարգում տրիազոլային օղակը 1,3-թիազոլային ցիկլով փոխարինելու նպատակով իրականացվել է նաև թիազոլոպիրիմիդինների սինթեզն, որի համար որպես ելանյութ կրկին օգտագործվել է 2-թիօքսո-6-մեթիլպիրիմիդին-4-ոնը: Վերջինս կարող է հանդես գալ տարբեր տաուտոմերային ձևերով: Քանի որ այս միացության ՄՄՌ ^{13}C սպեկտրի 175.83 մ.բ. տիրույթում դիտվում է C=S կրկնակի կապի ածխածնի ատոմին համապատասխանող ազդանշանը, իսկ ՄՄՌ ^{1}H սպեկտրում 11.98 մ.բ. տիրույթում՝ մեկ լայնացված երկպրոտոնային կլանում, հետևաբար հնարավոր իզոմերների թիվը կարող է լինել երեքը (**Ա-Գ**) [246]:



Ա Բ Գ

Նպատակային թիազոլո[3,2-a]պիրիմիդին ստանալու համար նախ ելային 2-թիօքսո-6-մեթիլպիրիմիդին-4-ոլը սենյակային ջերմաստճանում ԴՄՖԱ-ի միջավայրում ռեակցիայի մեջ է դրվել 3-քլորպենտան-2,4-դիոնի հետ:



Բ **109**

Ստացված **109** միացության ՄՄՌ ^{13}C սպեկտրում C=S կապի ածխածնի ատոմի ազդանշանն անհետանում է, իսկ ՄՄՌ ^{1}H սպեկտրում ենոլային ջրածնի ատոմի ազդանշանի հետ մեկտեղ ի հայտ է գալիս նաև ցիկլի OH կամ NH խմբի ջրածնի ատոմի կլանումը [246]: Ելնելով այս փաստերից կարելի է ասել, որ տեղակալման ռեակցիան ընթանում է ծծմբի ատոմի մոտ և կախված հետերոցիկլի տաուտոմերիայից՝ ստացված միացությունը կարող է հանդես գալ **109Ա-109Գ** տաուտոմերիներից որևէ մեկի ձևով:



109Ա **109Բ** **109Գ**

Վերջինս տոլուոլի միջավայրում կատալիտիկ քանակությամբ *պ*-տոլուոլուլֆոթթվի ներկայությամբ 125-130 ^{0}C-ում տաքացնելիս տեղի է ունենում դեհիդրատացում և ցիկլում, որի արդյունքում կարող է գոյանալ **110Բ** կամ **110Գ** միացությունը, քանի որ **109Ա** տաուտոմերում ներմոլեկուլային դեհիդրատացում չի կարող ընթանալ:



109Բ **110Բ** **109Գ** **110Գ**

Ստացված միացության կառուցվածքը հաստատվել է ռենտգենկառուցվածքային անալիզի միջոցով, որի տվյալները փաստում են, որ այդ միացությունն իր կառուցվածքով համապատասխանում է **110Բ** կետոածանցյալին (նկ.2) [246]:



Նկար 2. 2-Ացետիլ-3,7-դիմեթիլ-5H-թիազոլո[3,2-a]պիրիմիդին-5-ոնի **(110Բ)** կառուցվածքն ըստ ՌԿԱ-ի:

Մոլեկուլի կառուցվածքում ֆարմակաֆոր խմբերի ներմուծման նպատակով կետոնային խումբն ենթարկվել է որոշ փոխարկումների: Կետոնի փոխազդեցությունը սեմիկարբազիդի, թիոսեմիկարբազիդի և 4-մեթիլբենզոսուլֆոհիդրազիդի հետ հանգեցրել է

համապատասխան 2-(1-(3,7-դիմեթիլ-5-օքսո-5*H*-թիազոլո[3,2-a]պիրիմիդին-2-իլ)էթիլի-դեն)հիդրազին-1-կարբօքսամիդի **(111ա)**, 2-(1-(3,7-դիմեթիլ-5-օքսո-5*H*-թիազոլո[3,2-a]-պիրիմիդին-2-իլ) էթիլիդեն)հիդրազին-1-կարբոթիոամիդի **(111բ)** և N'-(1-(3,7-դիմեթիլ-5-օքսո-5*H*-թիազոլո[3,2-a]պիրիմիդին-2-իլ)էթիլիդեն)-4-մեթիլբենզոսուլֆոհիդրազիդի **(111գ)** առաջացմանը [246]:



110 **111ա-գ**

X = N-NHC(O)NH_2 **(ա)**, N-NHC(S)NH_2 **(բ)**, $CH_3C_6H_4SO_3HN$-N **(գ)** .

Գրականության մեջ հայտնի է, որ որոշ հետերոցիկլիկ տեղակալված օքսիմներ և դրանց էսթերներն ունեն արտահայտված ֆունգիցիդային, հերբիցիդային, ինսեկտիցի-դային և աճախթանիչ հատկություններ: Այդ իսկ պատճառով նպատակահարմար էր ուսումնասիրել ստացված **110** կետոնի փոխազդեցությունը հիդրօքսիլամինի հետ հիմքի ներկայությամբ սպիրտ-ջուր հոմոգեն համակարգում: Այդ ռեակցիայի արդյունքում ստացվել է 2-(1-(հիդրօքսիիմինո)էթիլ)-3,7-դիմեթիլ-5*H*-թիազոլո[3,2-a]պիրիմիդին-5-ոնը **(112)**:



110 **112**

Վերջինիս հետագա ալկիլումն իրականացվել է ԴՄՖԱ-ի միջավայրում համա-պատասխան ալկիլ հալոգենիդներով, որը հանգեցրել է **113ա,բ** ալկիլ ածանցյալների առաջացմանը [246]:



112 **113ա,բ**

113 R = C_3H_7 **(ա)**; R = $(CH_2)_2OC_6H_5$ **(բ)**; Hal = Br **(ա), (բ)** .

Իրականացվել են նաև քլոր- և բրոմսուկցինիմիդներով էլեկտրոֆիլ տեղակալման ռեակցիաներ պիրիմիդինի օղակում, որոնք հանգեցրել են համապատասխան **114ա,բ** հալոգեն ածանցյալների ստացմանը [246]:



Hal = Cl, Br .

Պիրիմիդինի և հագեցած թիազոլային նմանատիպ ցիկլի համադրությամբ կոնդենսված համակարգ սինթեզելու նպատակով 6-մեթիլ-2-թիօքսո-2,3-դիհիդրոպիրիմիդին-4(1*H*)-ոնը (**Բ**) փոխազդեցության մեջ է դրվել 1,2-դիքլորէթանի հետ:



Արգասիքի ՄՄՌ ^{13}C սպեկտրներում C=O կապի ածխածնի ատոմի ազդանշանը պահպանվում է, իսկ C=S կապի ածխածնի ատոմի ազդանշանի փոխարեն ի հայտ են գալիս ցիկլի մեթիլենային խմբերի կլանումներ: Ըստ էլեմենտար անալիզի և մասս-սպեկտրի (M^{+1}=169) տվյալների գոյացած միացության կառուցվածքում բացակայում է քլորի ատոմը: Դա վկայում է այն մասին, որ սենյակային ջերմաստիճանում միջանկյալ S-տեղակալված ածանցյալն ենթարկվում է հետերոցիկլման՝ առաջացնելով 7-մեթիլ-2,3-դիհիդրո-5*H*-թիազոլո[3,2-a]պիրիմիդին-5-ոն կամ 5-մեթիլ-2,3-դիհիդրո-7*H*-թիազոլո-[3,2-a]պիրիմիդին-7-ոն: Քանի որ **115** և **110** միացությունների ՄՄՌ ^{1}H և ^{13}C սպեկտրների պիրիմիդինային ֆրագմենտի ածխածնի ատոմի ազդանշանները նման են, կարելի է փաստել, որ հետերոցիկլման արդյունքում առաջանում է **115** 7-մեթիլ-2,3-դիհիդրո-5*H*-թիազոլո-[3,2-a]պիրիմիդին-5-ոնը [246]:

2.8. 2-((6-Մեթիլ-2-(մեթիլթիո)պիրիմիդին-4-իլ)օքսի)ացետոհիդրազիդի ածանցյալների սինթեզը և փոխարկումները

Ելային 2-մեթիլթիո-6-մեթիլպիրիմիդին-4-ոլի հետ հետագա փոխարկումների համար OH խումբը վեր է ածվել համապատասխան նատրիումական աղի, որի ալկիլումն ացետոնի, դիօքսանի կամ սպիրտային միջավայրում բերում է O- և N-տեղակալված իզոմերների խառնուրդի առաջացմանը: Նպատակային **116** O-տեղակալված ածանցյալի ստացումը բարձր ելքով (80%) իրականացվել է Na-ական աղի ռեակցիայով քլորքացախաթթվի մեթիլ էսթերի հետ ԴՄՖԱ-ի միջավայրում 1 *ժ* 90 ^{0}C-ում տաքացնելու պայմաններում: Վերջինս վեր է ածվել համապատասխան **117** հիդրազիդի 70%-ոց հիդրազին հիդրատի ավելցուկի ներկայությամբ 20 ^{0}C-ում 24 *ժ* ընթացքում [247,248]:



89 **116** **117**

Ստացված 2-((6-մեթիլ-2-(մեթիլթիո)պիրիմիդին-4-իլ)օքսի)ացետոհիդրազիդի (**117**) հետագա փոխարկումներն իրականացվել են երկու ուղղություններով: Առաջին դեպքում KOH-ի սպիրտային լուծույթում CS_2-ի ներկայությամբ սինթեզվել է 2-(2-((6-մեթիլ-2--(մեթիլթիո)պիրիմիդին-4-իլ)օքսի)ացետիլ)հիդրազին-1-կարբոդիթիոատի կալիումական աղը **(118)**:



117 **118**

Ուսումնասիրվել է վերջինիս հետերոցիկլումները սպիրտային և թթվային միջավայրում: Պարզվել է, որ սպիրտային միջավայրում հանգեցնում է 5-(((6-մեթիլ-2-(մեթիլթիո)պիրիմիդին-4-իլ)օքսի)մեթիլ)-1,3,4-օքսադիազոլ-2(3*H*)-թիոնի **(119)** առաջացմանը, իսկ ծծմբական թթվի միջավայրում, սենյակային ջերմաստիճանում՝ 5-(((6-մեթիլ-2-(մեթիլթիո)պիրիմիդին-4-իլ)օքսի)մեթիլ)-1,3,4-թիադիազոլ-2(3H)-թիոնի **(120)** առաջացմանը [247, 248]:



121,122 R = CH_3 (ա), CH_2COOCH_3 (բ) .

Կախված 1,3,4-օքսադիազոլի կամ 1,3,4-թիադիազոլի ցիկլերում շարժունակ ջրածնի ատոմի դիրքից, **119,120** միացությունները կարող են հանդես գալ երկու տաուտոմեր ձևերով: ՄՄՌ ^{1}H և ^{13}C ուսումնասիրության արդյունքները ցույց են տվել, որ այս երկու միացություններն էլ հանդես են գալիս թիոն-թիոլային տաուտոմերային կառուցվածքով: Դրանց մեթիլացումը, որն իրականացվել է ջրային միջավայրում, դիմեթիլսուլֆատի ազդեցությամբ, սենյակային ջերմաստիճանում ընթանում է էկզոցիկլիկ ծծմբի ատոմի մոտ, որի արդյունքում ստացվել են համապատասխան S-մեթիլ ածանցյալները **(121ա, 122ա)**: Այս դեպքում ՄՄՌ ^{13}C սպեկտրներում C=S կրկնակի կապի ածխածնի ատոմի ազդանշանի փոխարեն ի հայտ է գալիս S-մեթիլ խմբին բնորոշ ազդանշան [247, 248]:

Վերը նշված գիտական աշխատանքը 2016 թ. ներկայացվել է Կազանում ընթացած միջազգային գիտաժողովում, որը և արժանացել է երրորդ կարգի դիպլոմի [247]:

Փոխարկումների երկրորդ ուղղությունը հիմնված է **117** հիդրազիդի և տարբեր իզոթիոցիանատների փոխազդեցության վրա, որի արդյունքում առաջանում են համապատասխան **123ա-գ** N-ալկիլ(արիլ)-2-(2-((6-մեթիլ-2-(մեթիլթիո)պիրիմիդին-4-իլ)օքսի)-ացետիլ)հիդրազին-1-կարբոթիոամիդներ:



R = C_2H_5 (ա), C_6H_5 (բ), *պ*-$CH_3C_6H_4$ (գ) .

Վերջիններիս հետերոցիկլումը թթվային միջավայրում հանգեցնում է **124ա-գ** N-ալկիլ-(արիլ)-5-(((6-մեթիլ-2-(մեթիլթիո)պիրիմիդին-4-իլ)օքսի)մեթիլ)-1,3,4-թիադիազոլ-2-ամինների առաջացմանը:



R = C_2H_5 (ա), C_6H_5 (բ), *ա*-$CH_3C_6H_4$ (գ) .

Սինթեզված **124ա-գ** միացությունները պարունակում են NH-C=N ամիդինային խմբավորում և կարող են հանդես գալ էկզոցիկլիկ ազոտի նկատմամբ ամին-իմինային տաուտոմերային ձևերով: Այս երկու կառուցվածքների միջև ընտրությունը կատարվել է ելնելով սպեկտրների տվյալներից: Այսպես, ՄՄՌ ^{1}H սպեկտրում N-էթիլ ածանցյալի NH-խմբի պրոտոնի ազդանշանը դիտվում է լայնացած տրիպլետի (J_2 = 5.3 *Հg*), իսկ մեթիլենային խմբի ազդանշանը՝ մուլտիպլետի ձևով (կ դ, J_1 = 7.2, J_2 = 5.3 *Հg*): Երկրորդ սպին-սպինային փոխազդեցությունը (*J*=5.3 *Հg*) հնարավոր է միայն NH-CH_2-CH_3 ֆրագմենտի ամինային ձևի դեպքում, որտեղ NH- և CH_2-խմբերի պրոտոնները գտնվում են հարևանությամբ: Այս փաստը միանշանակ հաստատում է **124ա-գ** միացությունների ամինային կառուցվածքը [247, 248]:

Հիմնային հիդրոլիզի ժամանակ, որն իրականացվում է 10%-ng NaOH-ի միջավայրում 2 *ժ* տաքացնելու պայմաններում, տեղի է ունենում O-C կապի ճեղքում և արդյունքում առաջանում է 6-մեթիլ-2-մեթիլթիո-պիրիմիդին-4-ոլ **(89)** [248]:



R = C_2H_5 (ա), C_6H_5 (բ), *ա*-$CH_3C_6H_4$ (գ) .

Պիրիմիդինի ածանցյալների շարքն ընդլայնելու նպատակով ելանյութային **117** հիդրազիդը ջրային միջավայրում $NaNO_2$-ի և CH_3COOH-ի ազդեցությամբ վեր է ածվել 2-((6-մեթիլ-2-(մեթիլթիո)պիրիմիդին-4-իլ)օքսի)ացետիլազիդի **(125)**:



Վերջինս Կուրցիուսի վերախմբավորման ռեակցիայի պայմաններում (բացարձակ տոլուոլ, պիրիդինի կատալիտիկ քանակներ, 120 ^{0}C) փոխազդեցության մեջ է դրվել ամինների հետ:



R = C_6H_5 **(ա)**, 4-Cl-C_6H_4 **(բ)**, O N **(գ)**, N **(դ)**, 4-CH_3-C_6H_4-OCH_2CH_2 **(ե)** .

Պարզվել է, որ ռեակցիան ընթանում է ոչ ավանդական ուղղությամբ, այսինքն՝ տեղի է ունենում ոչ թե ազոտի անջատում և միզանյութի ածանցյալների առաջացում, այլ անջատվում է HN_3՝ գոյացնելով ացետամիդներ: Այս փաստը ապացուցվել է ՄՄՌ սպեկտրների տվյալների օգնությամբ: Արիլամինոածանցյալների ՄՄՌ ^{1}H սպեկտրներում հայտնաբերվում է միայն մեկ NH-խմբի ազդանշան, իսկ մորֆոլինի և պիպերիդինի դեպքում այդպիսի խմբի կլանումը բացակայում է [248]:

2.9. Սինթեզներ 4-քլոր-6-մեթիլ-2-(մեթիլթիո)պիրիմիդինի հիման վրա

Սինթեզված միացությունների կառուցվածքի և ակտիվության միջև եղած կապի ուսումնասիրությունների համար նախկինում սինթեզված **117** պիրիմիդինիլօքսիացետոհիդրազիդներում թթվածնի ատոմը փոխարինվել է ծծմբի ատոմով՝ նպատակ ունենալով դրանք ենթարկել որոշակի փոխարկումների և ուսումնասիրել վերջնական միա-

ցությունների ակտիվությունը: Սինթեզն իրականացնելու համար 4-քլոր-6-մեթիլ-2-(մեթիլթիո)պիրիմիդինի **(91)** և թիոմիզանյութի ռեակցիայի միջոցով կատալիտիկ HCl-ի ներկայությամբ ստացվել է 4-քլոր-6-մեթիլ-2-(մեթիլթիո)պիրիմիդին-4-իլի թիոուրոնիումային աղը **(127)**, որն այնուհետև հիմքի ազդեցությամբ վեր է ածվել 6-մեթիլ-2-(մեթիլթիո)-4-մերկապտոպիրիմիդինի **(128)**:



Վերջինիս կալիումական աղի և քլորքացախաթթվի մեթիլ էսթերի փոխազդեցությամբ ստացվել է համապատասխան էսթերը **(129)**: Սակայն այս էսթերի հիդրազինոլիզը չբերեց ակնկալվող թիոքացախաթթվի հիդրազիդի առաջացմանը: Ըստ սպեկտրային տվյալների հետազոտությունների տեղի է ունենում C-S կապի ճեղքում և



առաջանում է 6-մեթիլ-2-(մեթիլթիո)-4-հիդրազինոպիրիմիդին **(93)**, որն արդեն ստացվել է 4-քլոր-6-մեթիլ-2-(մեթիլթիո)պիրիմիդինի **(91)** և հիդրազին հիդրատի փոխազդեցությունից [248]:

2.10. Սինթեզված միացությունների կենսաբանական ակտիվությունը

Ուսումնասիրվել են սինթեզված միացությունների կենսաբանական ակտիվությունները: Միացություններից ութը **(13,18,19,20,23գ, 23դ,24բ,123ա)** ցուցաբերել են 40-80 % հերբիցիդային ակտիվություն 3 *կգ/հա* չափաքանակներով: Սնկամարմինների վրա որոշակի ճնշող ազդեցություն չի արձանագրվել: Ստացված միացությունների մեծ մասը ցուցաբերել են արտահայտված աճախթանիչ ակտիվություն:

Փորձարկվող միացությունների աճախթանիչ հատկությունը ուսումնասիրելու համար կիրառվել են համապատասխան միացությունների 25 *մգ/լ* և 50 *մգ/լ* խտությունների լուծույթներ, սուսպենզիաներ կամ էմուլսիաներ: Որպես թեստ-օբյեկտ օգտագործվել է լոբին *(Phaseolus vulgaris L)*: Փորձերը կատարվել են հետևյալ եղանակով. լոբու սերմերը 24 *ժ* ընթացքում պահվել են միացությունների համապատասխան կոնցենտրացիաների լուծույթների, սուսպենզիաների կամ էմուլսիաների մեջ, որից հետո ծլեցման նպատակով սերմերը տեղադրվել են խոնավ խցիկներում: Ցանքի 5-րդ օրը որոշվել է ծլման էներգիան, իսկ 15-րդ օրը՝ ծլունակությունը: Փորձի 20-րդ օրը որոշվել են արմատային համակարգի և վերգետնյա մասի թաց և չոր զանգվածները: Այդ ցուցանիշները համեմատվել են էտալոն հանդիսացող հետերոաուքսինի ցուցանիշների հետ:

Պարզվել է, որ պիրազոլիլպիրիդազինի **1,2** քլոր- և հիդրազինոածանցյալները ցուցաբերում են բարձր աճախթանիչ ակտիվություն, սակայն դրանց մոլեկուլում երկրորդ պիրազոլային խումբ ներմուծելիս (միացություն **5**) նշված ակտիվությունը նվազում է: Պիրազոլիլթիոպիրիդազինի ածանցյալներից արտահայտված աճախթանիչ ակտիվություն ցուցաբերում են **10, 11բ, 11գ** և **12** միացությունները, որոնց 25 *մգ/լ* և 50 *մգ/լ* կոնցենտրացիաների դեպքում այն կազմում է 71-91% (աղ.3):

Աղյուսակ 3

1-5 և 9-13 Միացությունների աճախթանիչ ակտիվությունները



№	R	Աճախթանիչ ակտիվություն (%)	
		25 *մգ/լ*	50 *մգ/լ*
Հետերոաուքսին		100	100
1	Cl	86.4	61.9
2	$NH\text{-}NH_2$	89.2	81.2
3		73.4	75.7
4		32.5	53.2
5		65.1	76.1
9		49.2	47.9
10	SH	63.3	79.1
11ա	SCH_3	52.5	66.8
11բ	SCH_2COOH	71.4	57.7
11գ	SCH_2CONH_2	62.5	69.9
11դ	SCH_2COOCH_3	60.4	60.5
11ե	$SCH_2COOC_2H_5$	63.9	48.5
11զ	$SCH(COCH_3)_2$	68.1	80.2
12		91	65.3
13		67.1	71.2

Համեմատվել են **6-8** կոնդենսված տրիազոլոպիրիդազինների և **101-104** տրիազոլոպիրիմիդինների աճախթանիչ հատկությունները: Պարզվել է, որ համեմատաբար աճախթանիչ բարձր ակտիվություն ցուցաբերում են տրիազոլոպիրիմիդինները (աղ.4):

Աղյուսակ 4

6-8 և 101-104 Միացությունների աճախթանիչ ակտիվությունները



№	R	R^1	Աճախթանիչ ակտիվություն (%)	
			25 *մգ/լ*	50 *մգ/լ*
Հետերոաուքսին			100	100
6	--	--	64.7	62
7	--	H	51.9	45.7
8բ	--	CH_2CONH_2	70.2	54.8
8գ	--	CH_2COOCH_3	77.2	58.7
8դ	--	$CH_2CH_2OC_6H_5$	42.1	83.9
8ե	--	$CH(COCH_3)_2$	76.1	45.9
101	CH_3	H	56.1	50.7
102	$CH_2C_6H_5$	H	53.7	65.5
103ա	CH_3	CH_3	57.2	68.4
103բ	CH_3	C_3H_7	74.0	71.7
103դ	CH_3	CH_2COOCH_3	83.0	71.3
103ե	CH_3	$CH_2CH_2OC_6H_5$	51.0	62.2
104դ	$CH_2C_6H_5$	CH_2COOCH_3	69.2	65.5

Աճախթանիչ ակտիվություն են ցուցաբերում նաև **14-20** պիրազոլիլպիրիդազինիլթիոպիրազոլները: Պիրազոլի N-ալկիլ և ազինիլ տեղակալված ածանցյալների մոտ նկատվում է աճախթանիչ ակտիվության աճ N-H ածանցյալի համեմատ (աղ. 5):

Աղյուսակ 5

14-20 Միացությունների աճախթանիչ ակտիվությունները



№	R	Աճախթանիչ ակտիվություն (%)	
		25 *մգ/լ*	50 *մգ/լ*
Հետերոաուքսին		100	100
14	H	62.1	77.9
15	CH_3	73.5	86.5
16		56.6	69.1
17		74.3	84
18		55.3	69.1
19		71.1	84.9
20		69.6	62.5

Կենսաբանական փորձարկումների արդյունքները ցույց են տվել, որ պիրիդազինիլօքսիպիրազոլները ցուցաբերել են թույլ արտահայտված աճախթանիչ ակտիվություն, սակայն պիրազոլի N-տրիազինիլ և արիլ ածանցյալների մոտ **(23-25բ,27)** նկատվում է աճախթանիչ ակտիվության զգալի աճ, ինչը չի կարելի ասել նրանց կարբօքսամիդո ածանցյալների մասին **(26ա-26գ)**: Պարզվել է, որ սինթեզված ազինիլօքսիպիրիդազիններն **(71-81, 86-88)** օժտված են աճախթանիչ բարձր ակտիվությամբ, որոշ ածանցյալների մոտ այն հասնում է ≥ 90% (աղ.6):

Աղյուսակ 6

22-27, 71-81, 86-88 Միացությունների աճախթանիչ ակտիվությունները



22



23-27



71-81



86-88

№	R	R^1	Աճախթանիչ ակտիվություն (%)	
			25 *մգ/լ*	50 *մգ/լ*
22	--	--	74.9	66.2
23ա	H	--	46.7	66.7
23բ	CH_3	--	44.9	55.5
23գ	C_6H_5	--	78.3	52.5
23դ		--	90.8	36.1
23ե		--	82.3	49.7
23զ		--	70.1	61.3
24ա		--	78.1	47.1
24բ		--	34.3	22.1
25ա	$C_6H_5OCH_2CH_2$	--	72.1	62.1
25բ	$2\text{-}CH_3C_6H_4OCH_2CH_2$	--	77.4	60.3
25գ	$CH_2C(O)NH_2$	--	65.4	58.1
26ա	$C_6H_5NHC(O)$	--	67.4	50.7
26բ	$3\text{-}ClC_6H_4NHC(O)$	--	53.3	49.9
26գ	$3,4\text{-}Cl_2C_6H_3NHC(O)$	--	67.4	59.7
27	$C_6H_5C(O)$	--	83.7	83.6
71	H	OCH_3	53.3	74.5
72	CH_3	OCH_3	72.2	90.3
73	C_6H_5	OCH_3	70.5	90.0
75	H	$N(CH_3)_2$	53.8	79.3
76	CH_3	$N(CH_3)_2$	69.2	72.1
77	C_6H_5	$N(CH_3)_2$	77.2	75.9
78	$CH_2CH_2OC_6H_5$	$N(CH_3)_2$	92.0	53.3
79	CH_2CONH_2	$N(CH_3)_2$	72.4	57.1
80	$CH_2COOC_2H_5$	$N(CH_3)_2$	58.5	50.4
81	$CH_2CH_2OC_6H_4\text{-}CH_3$	$N(CH_3)_2$	68.9	62.8
86	H	--	70.9	87.1
87	CH_3	--	90.0	83.4
88	C_6H_5	--	56.0	61.6

1,3,4-Օքսադիազոլթիոլների շարքում աճախթանիչ ակտիվություն ցուցաբերել են **55, 57-59, 64բ,ե, 65ա,գ,դ** և **66գ,դ** միացությունները: Պիրիդազինի N-ֆենիլ ածանցյալների **(65ա,գ,դ** և **66գ,դ)** մոտ աճախթանիչ հատկությունն առավել արտահայտված է 50 *մգ/լ* կոնցենտրացիայի դեպքում, իսկ 3-պիրազոլիլպիրիդազինի մոտ **(64ե)**՝ 25 *մգ/լ* կոնցենտրացիայի դեպքում (աղ. 7):

Աղյուսակ 7

55-59,63-66 Միացությունների աճախթանիչ ակտիվությունները



№	X	Ar	R	R^1	Աճախթանիչ ակտիվություն (%)	
					25 *մգ/լ*	50 *մգ/լ*
55	OC_2H_5	--	--	--	58.2	71.8
56		--	--	--	53.3	49.4
57	--	C_6H_5	H	--	70.0	59.3
58	--	C_6H_5	CH_3	--	79.8	73.9
59	--	$4\text{-}ClC_6H_4CH_2$	H	--	56.5	91.8
63բ	OC_2H_5	--	--	$CH_2COOC_2H_5$	53.3	49.4
64բ		--	--	$CH_2COOC_2H_5$	71.2	71.4
64դ		--	--	CH_2CONH_2	63.7	59.3
64ե		--	--	$C_6H_5OCH_2CH_2$	86.2	72.5
65ա	--	C_6H_5	H	CH_3	69.9	77.4
65գ	--	C_6H_5	H	CH_2COOCH_3	66.9	75.8
65դ	--	C_6H_5	H	CH_2CONH_2	67.3	72.2
66գ	--	C_6H_5	CH_3	CH_2COOCH_3	65.2	72.8
66դ	--	C_6H_5	CH_3	CH_2CONH_2	81.2	84.1

Իրականացվել են նաև **93-98, 105-108** թիոալկիլպիրիմիդինների ածանցյալների աճախթանիչ հատկությունների ուսումնասիրությունները: Պարզվել է, որ վերջիններիս մոլեկուլում պիրազոլային և պիրիդազինային օղակներ ներմուծելիս նկատվում է աճա-

խթանիչ ակտիվության աճ **(105-108)**: Փորձարկվել են նաև թիազոլոպիրիմիդինները և պարզվել է, որ այդ շարքում **(110-113բ)** միացությունները ցուցաբերում են ավելի բարձր աճախթանիչ ակտիվություն, քան վերջիններիս հալոգեն տեղակալված ածանցյալները **(114ա,բ)** (աղ. 8):

Աղյուսակ 8

93-98, 105-108 Միացությունների աճախթանիչ ակտիվությունները



93-98, 105-108



109



110-114

№	R	R^1	R^2	Աճախթանիչ ակտիվություն (%)	
				25 *մգ/լ*	50 *մգ/լ*
93	CH_3	$NH\text{-}NH_2$	--	52.4	60.9
94	$CH_2C_6H_5$	$NH\text{-}NH_2$	--	61	68.4
95	CH_3	$NHNHC(O)NHC_6H_5$	--	73.2	75.8
96	$CH_2C_6H_5$	$NHNHC(O)NHC_6H_5$	--	91.8	89.5
98	$CH_2C_6H_5$	$NHNHC(S)NHC_6H_5$	--	75.4	77.2
105	CH_3		--	82.2	40
106	$CH_2C_6H_5$		--	65.5	72.2
107	CH_3		--	68.4	70.59
108	$CH_2C_6H_5$		--	70.7	82.9
109	$CH(COCH_3)_2$	--	--	50.14	66.8
110	--	O	H	49.2	79.1
111ա	--	$NNHC(O)NH_2$	H	61.5	64.4
111բ	--	$NNHC(S)NH_2$	H	63.4	68.7
111գ	--	$4\text{-}CH_3C_6H_4SO_3NHN$	H	65.6	38.5
112	--	NOH	H	57.3	71.4
113ա	--	NOC_3H_7	H	67.9	54.1
113բ	--	$NOCH_2CH_2OC_6H_5$	H	59.2	60.3
114ա	--	O	Cl	47.8	43
114բ	--	O	Br	68.8	65.7

Սինթեզված 6-մեթիլ-2-(մեթիլթիո)պիրիմիդինի O-տեղակալված ածանցյալներն **(118,123)** արտահայտված աճախթանիչ ակտիվություն են ցուցաբերում 50 *մգ/լ* կոնցենտրացիայի դեպքում (75-87.6%): Համեմատվել են պիրիմիդինիլ օքսիթիադիազոլների(օքսադիազոլների) **(119-122,124)** աճախթանիչ ակտիվության տվյալները և պարզվել է, որ օքսադիազոլային օղակի փոխարինումը թիադիազոլային օղակով բերում է աճախթանիչ ակտիվության աճի (աղ. 9):

Աղյուսակ 9

118-124 Միացությունների աճախթանիչ ակտիվությունները



118



123



119-122, 124

№	X	R	R^1	Աճախթանիչ ակտիվություն (%)	
				25 *մգ/լ*	50 *մգ/լ*
118		$CH_2CONHNHC(S)SK$	--	60	75
119	O	SH	--	74.7	79.3
120	S	SH	--	66.7	66.9
121ա	O	SCH_3	--	56.7	54.1
121բ	O	SCH_2COOCH_3	--	58.9	74.2
122ա	S	SCH_3	--	50.6	58.9
122բ	S	SCH_2COOCH_3	--	76.5	62.6
123ա		--	C_2H_5	80.5	74.5
123բ		--	C_6H_5	50	83.6
123գ		--	$4\text{-}CH_3C_6H_4$	50	87.6
124ա	S	NHC_2H_5	--	70.1	68.1
124բ	S	NHC_6H_5	--	79.5	94.1
124գ	S	$NHC_6H_3CH_3$	--	92.1	68.6

Այսպիսով, սինթեզված միացությունների կառուցվածքի և իրականացված լաբորատոր-վեգետացիոն փորձարկումների արդյունքում հայտնաբերված աճախթանիչ ակտիվությունների միջև եղած կապի որոշակի առանձնահատկություններից կարելի է անել հետևյալ եզրահանգումները.

Պարզվել է, որ պիրազոլային օղակի ներմուծումը բերում է աճախթանիչ հատկու-

թյունների նվազմանը, սակայն պիրազոլի 1-N դիրքում ալկիլ կամ ազինիլ տեղակալիչի առկայության դեպքում աճախթանիչ ակտիվությունը մեծանում է:

Հերբիցիդային ակտիվության աճ նկատվում է երկու ազինային օղակներ պարունակող եռ- և քառացիկլիկ չկոնդենսված հետերոհամակարգերում:

Պիրիմիդինիլօքսիօքսադիազոլների մոտ օքսադիազոլային օղակի փոխարինումը թիադիազոլային օղակով բերում է աճախթանիչ ակտիվության աճի:

Ատենախոսական ուսումնասիրությունների ընթացքում ստացված միացությունների շարքերում հայտնաբերվել են արտահայտված աճախթանիչ և հերբիցիդային հատկություններով օժտված նյութեր: Աշխատանքի արդյունքները վկայում են նաև այն մասին, որ սինթեզված համակարգերը հեռանկարային են այդ շարքերում բարձր աճակարգավորիչ հատկություններով օժտված նոր ածանցյալների հայտնաբերման համար:

ՓՈՐՁՆԱԿԱՆ ՄԱՍ

^{1}H և ^{13}C ՄՄՌ սպեկտրները գրանցվել են 300.007 *ՄՀց* (^{1}H) աշխատանքային հաճախականությամբ “Mercury-300” սպեկտրոմետրի վրա, ԴՄՍՕ-d_6 + CCl_4 լուծիչների խառնուրդում (1:3) կամ մաքուր ԴՄՍՕ-d_6-ում: ԻԿ սպեկտրները գրանցվել են “Nicolet Avatar 330FT-IR” սպեկտրոմետրի միջոցով, օգտագործելով ATR մեթոդը: Մասս-սպեկտրները ստացվել են “Bruker GC/MS” քրոմատա-մասս-սպեկտրոմետրի օգնությամբ: Ռենտգենկառուցվածքային անալիզը իրականացվել է Enraf-Nonius CAD-4 դիֆրակտոմետրով: Միկրոալիքային ճառագայթման մեթոդի համար կիրառվել է “Gorenje Model MO 17 L” (2450 *ՄՀց*, 800 W հզորությամբ) միկրոալիքային վառարանը: Սինթեզի ընթացքում այն կիրառվել է 160 W հզորությամբ յուրաքանչյուր 30 վայրկյան ընդհատմամբ: Նրբաշերտ քրոմոտոգրաֆիան իրականացվել է “Silufol UV-254” թիթեղների վրա, որպես հայտածիչ օգտագործվել է 2% $AgNO_3$ + 0.4% բրոմֆենոլ կապույտ և 4% լիմոնաթթու, իսկ որպես էլյուենտ՝ էթանոլ-ԴՄՖԱ, 1:1, ացետոն-հեքսան, 1:1 և 1:2 :

3-Քլոր-6-(3,5-դիմեթիլ-1*H*-պիրազոլ-1-իլ)պիրիդազին (1). 0.01 *Մոլ* (1.5 *գ*) 3-քլոր-6-հիդրազինիլպիրիդազինին 10 *մլ* էթանոլի միջավայրում ավելացնում են 0.01 *մոլ* (1.0 *գ*) 2,4-պենտան-դիոն: Ռեակցիոն խառնուրդը եռացնում են 5 *ժ*, ապա սառեցնում, լուծիչը մասամբ հեռացնում, ավելացնում քիչ քանակի ջուր և ստացվածը ֆիլտրում, չորացնում: Ելքը 1.75 *գ* (84%), հ.կ. 113-115 ^{0}C: ^{1}H ՄՄՌ սպեկտր, δ, մ.բ., *J* (*Հց*). 2.25 ս (3H, 3-CH_3); 2.72 ս (3H, 5-CH_3); 5.92 ս (1H, CH-պիրազոլ); 7.78 դ և 8.17 դ (2H, CH=CH, *J*=9.3): ^{13}C ՄՄՌ սպեկտր, δ, մ.բ., 13.06, 14.44, 109.88, 122.13, 129.99, 141.43, 150.31, 152.75, 155.51: Գտնված է, %. Cl 16.72; N 26.63. $C_9H_9ClN_4$. Հաշված է, %. Cl 16.99; N 26.85:

3-(3,5-Դիմեթիլ-1*H*-պիրազոլ-1-իլ)-6-հիդրազինիլպիրիդազին (2). 0.01 *Մոլ* (2.09 *գ*) 3-քլոր-6-(3,5-դիմեթիլ-1*H*-պիրազոլ-1-իլ)պիրիդազինին 3 *մլ* դիօքսանի միջավայրում ավելացնում են 4 *մլ* (70 %-ոց) հիդրազինհիդրատ: Տաքացնում 110-115 ^{0}C 10 *ժ*, ապա խառնուրդը սառեցնում, ավելացնում են 20 *մլ* սառը ջուր և ստացվածը ֆիլտրում, չորացնում: Ելքը 1.67 *գ* (82%), հ.կ. 142-145 ^{0}C: ^{1}H ՄՄՌ սպեկտր, δ, մ.բ., *J* (*Հց*). 2.21 ս (3H, 3-CH_3); 2.56 ս (3H, 5-CH_3); 4.10 լ.ս (2H, NH_2); 5.92 ս (1H, CH-պիրազոլ); 7.15 դ և

7.67 դ (2H, CH=CH, *J*=9.4); 7.80 լ.ս (1H, NH): ^{13}C ՄՄՌ սպեկտր, δ, մ.բ., 13.07, 13.49, 107.71, 115.83, 122.00, 139.73, 148.03, 150.07, 159.74: Գտնված է, %. N 41.38. $C_9H_{12}N_6$. Հաշված է, %. N 41.15:

3,4 միացությունների սինթեզը

0.01 *Մոլ* **2** միացության և 10 *մլ* քացախաթթվի խառնուրդին ավելացնում են 3 կաթիլ ԴՄՖԱ, այնուհետև 0.01 *Մոլ* պենտան-2,4-դիոն կամ ացետոքացախաթթվի էթիլ էսթեր: Ռեակցիոն խառնուրդը թողնում են 24 *ժ* սենյակային ջերմաստիճանում, ապա հեռացնում լուծիչը, ավելացնում 20-30 *մլ* սառը ջուր և ստացվածը ֆիլտրում, չորացնում:

3,6-Բիս(3,5-դիմեթիլ-1*H*-պիրազոլ-1-իլ)պիրիդազին (3). Ելքը 2.3 *գ* (85%), հ.կ. 170-172 ^{0}C: ^{1}H ՄՄՌ սպեկտր, δ, մ.բ., *J* (*Հz*). 2.25 ս (6H, 2x3-CH_3); 2.77 ս (6H, 2x5-CH_3); 6.05 ս (2H, CH-պիրազոլ); 8.22 ս (2H, CH=CH, *J*=9.4); Գտնված է, %. N 31.55. $C_{14}H_{16}N_6$. Հաշված է, %. N 31.32:

Էթիլ 3-(2-(6-(3,5-դիմեթիլ-1*H*-պիրազոլ-1-իլ)պիրիդազին-3-իլ)հիդրազոնո)բութանատ (4). Ելքը 2.3 *գ* (96%), հ.կ. 118-120 ^{0}C: ^{1}H ՄՄՌ սպեկտր, δ, մ.բ., *J* (*Հz*). 1.29 տ (3H, OCH_2CH_3, *J*=7.1); 2.06 ս (3H, N=CCH_3); 2.23 ս (3H, 3-CH_3); 2.60 ս (3H, 5-CH_3); 3.30 ս (2H, N=CCH_2), 4.14 կ (2H, OCH_2CH_3, *J*=7.1), 5.95 ս (1H, CH-պիրազոլ), 7.55 դ և 7.83 դ (2H, CH=CH, *J*=9.6); 10.06 լ.ս (1H, NH); Գտնված է, %. N 26.38. $C_{15}H_{20}N_6O_2$. Հաշված է, %. N 26.56:

1-(6-(3,5-Դիմեթիլ-1*H*-պիրազոլ-1-իլ)պիրիդազին-3-իլ)-3-մեթիլ-1*H*-պիրազոլ-5-ոլ (5). 0.01 *Մոլ* (3.16 *գ*) **4** միացությանը ավելացնում են 20 *մլ* 0.01 *մոլ* (0,6 *գ*) KOH-ի ջրային լուծույթ և 3 *ժ* եռացնում: Այնուհետև ստացված խառնուրդին ավելացնում 10 *մլ* սառը ջուր և չեզոքացնում HCl-ով pH=4, ստացվածը ֆիլտրում են, լվանում ջրով, չորացնում և վերաբյուրեղացնում ԴՄՖԱ–ից: Ելքը 1.6 *գ* (60%), հ.կ. 248-250 ^{0}C: ^{1}H ՄՄՌ սպեկտր, δ, մ.բ., *J* (*Հz*). 2.24 ս (6H, 3-CH_3 և 2x3-CH_3); 2.68 ս (3H, 5-CH_3); 5.00 ս (1H, CH-պիրազոլ); 6.02 ս (1H, CH-պիրազոլ); 8.12 դ և 8.92 դ (2H, CH=CH, *J*=9.4); 12.36 լ.ս (1H, OH): Գտնված է, %. N. 31.48. $C_{13}H_{14}N_6O$. Հաշված է, %. N 31.09:

6-(3,5-Դիմեթիլ-1*H*-պիրազոլ-1-իլ)-3-մեթիլ[1,2,4]տրիազոլո[4,3-*b*]պիրիդազին (6). 0.01 *Մոլ* (2.04 *գ*) **2** միացության և 15 *մլ* քացախաթթվի խառնուրդը խառնման

պայմաններում եռացնում 8 *ժ*, ապա սառեցնում են, ավելացնում 15-20 *մլ* սառը ջուր և ստացված լուծույթը չեզոքացնում NH_4OH-ով: Առաջացած նստվածքը ֆիլտրում են, չորացնում և վերաբյուրեղացնում հեքսանից: Ելքը 1.3 *գ* (59%), հ.կ. 165-167 ^{0}C: ^{1}H ՄՄՌ սպեկտր, δ, մ.բ., *J* (*Հz*). 2.27 ս (3H, 3-CH_3); 2.71 ս և 2.72 ս (6H, 5-CH_3 և 3-CH_3); 6.10 ս (1H, CH-պիրազոլ); 7.96 դ և 8.25 դ (2H, CH=CH, *J*=9.9): Գտնված է, %. N 36.69. $C_{11}H_{12}N_6$. Հաշված է, %. N 36.82:

6-(3,5-Դիմեթիլ-1*H*-պիրազոլ-1-իլ)-[1,2,4]տրիազոլո[4,3-b]պիրիդազին-3(2H)--թիոն (7). 0.01 *Մոլ* (2.04 *գ*) հիդրազինիլպիրիդազինի **(2),** 10 *մլ* էթանոլի և 0.015 *մոլ* (1.14 *գ*) CS_2-ի խառնուրդը տաքացնում են մինչև 50 ^{0}C և այդ պայմաններում կաթիլներով ավելացնում 0.02 *մոլ* (1.2 *գ*, 20*մլ*) KOH-ի էթանոլային լուծույթ, տաքացնում 10 *ժ* 75-80 ^{0}C: Էթանոլը հեռացնում են, ավելացնում 25-30 *մլ* ջուր: Ստացված լուծույթը թթվեցնում են HCl-ով, 2 *ժ* հետո նստվածքը ֆիլտրում, լվանում ջրով և չորացնում: Ելքը 2.0 *գ* (81%), հ.կ. 265-267 ^{0}C: ^{1}H ՄՄՌ սպեկտր, δ, մ.բ., *J* (*Հz*). 2.23 ս (3H, 3-CH_3); 2.80 ս (3H, 5-CH_3); 6.10 ս (1H, CH-պիրազոլ); 8.03 դ և 8.08 դ (2H, CH=CH, *J*=9.9); 14.60 ս (1H, NH): ^{13}C ՄՄՌ սպեկտր, δ, մ.բ., 13.08, 14.61, 110.31, 118.91, 126.00, 140.14, 142.14, 149.54, 150.35, 161.81: Գտնված է, %. N 33.84; S 13.24. $C_{10}H_{10}N_6S$. Հաշված է, %.
N 34.12; S 13.02:

6-(3,5-Դիմեթիլ-1*H*-պիրազոլ-1-իլ)-3-(մեթիլթիո)-[1,2,4]տրիազոլո[4,3-b]պիրիդազին (8ա). 0.01 *Մոլ* **7** միացության կալիումական աղին ավելացնում են 15 *մլ* ԴՄՖԱ և 0.011 *մոլ* (1.4 *գ*) դիմեթիլսուլֆատ: Ռեակցիոն խառնուրդը սենյակային ջերմաստիճանում խառնում են 6 *ժ*: Հաջորդ օրը տաքացնում 50-55 ^{0}C 4-5 *ժ* մինչև ռեակցիոն միջավայրի pH=7: Լուծիչը մասամբ հեռացնում են, մշակում ջրով, մնացորդը ֆիլտրում և չորացնում: Ելքը 2.0 *գ* (77%), հ.կ. 173-175 ^{0}C: ^{1}H ՄՄՌ սպեկտր, δ, մ.բ., *J* (*Հz*). 2.26 ս (3H, 3-CH_3); 2.72 դ (3H, 5-CH_3, *J*=0.9); 2.81 ս (3H, S-CH_3); 6.11 ս (1H, CH-պիրազոլ); 7.98 դ և 8.27 դ (2H, CH=CH, *J*=9.9): ^{13}C ՄՄՌ սպեկտր, δ, մ.բ., 13.03, 13.18, 14.22, 110.45, 115.59, 118.87, 125.82, 141.45, 145.76, 149.59, 150.46: Գտնված է, %. N 32.41;
S 12.51. $C_{11}H_{12}N_6S$. Հաշված է, %. N 32.28; S 12.32:

8բ,գ միացությունների սինթեզը

0.01 *Մոլ* **7** միացության կալիումական աղի վրա ավելացնում են 15 *մլ* ԴՄՖԱ, 0.01 մոլ NaI և 0.011 *մոլ* 2-քլորացետամիդ կամ 0.011 *մոլ* քլորքացախաթթվի մեթիլ էսթեր: Ռեակցիոն խառնուրդը տաքացնում են 55-60 ^{0}C 6-8 *ժ* : Լուծիչը մասամբ հեռացնում են, մնացորդը մշակում KOH-ի և $Na_2S_2O_3$-ի ջրային լուծույթով և ֆիլտրում:

2-((6-(3,5-Դիմեթիլ-1*H*-պիրազոլ-1-իլ)-[1,2,4]տրիազոլո[4,3-*b*]պիրիդազին-3--իլ)թիո)ացետամիդ (8բ). Ելքը 1.9 *գ* (63%), հ.կ. 212-214 ^{0}C: ^{1}H ՄՄՌ սպեկտր, δ, մ.բ., *J* (*Հց*). 2.26 ս (3H, 3-CH_3); 2.75 ս (3H, 5-CH_3); 4.00 ս (2H, S-CH_3); 6.12 ս (1H, CH-պիրազոլ); 7.00 լ.ս և 7.52 լ.ս (2H, NH_2); 7.98 դ և 8.28 դ (2H, CH=CH, *J*=9.9): Գտնված է, %. N 32.41; S 10.38. $C_{12}H_{13}N_7HS$. Հաշված է, %. N 32.22; S 10.57:

Մեթիլ 2-((6-(3,5-դիմեթիլ-1*H*-պիրազոլ-1-իլ)-[1,2,4]տրիազոլո[4,3-b]պիրիդազին-3-իլ)թիո)ացետատ (8գ). Ելքը 1.6 *գ* (50%), հ.կ. 192-195 ^{0}C: ^{1}H ՄՄՌ սպեկտր, δ, մ.բ., *J* (*Հց*). 2.26 ս (3H, 3-CH_3); 2.73 ս (3H, 5-CH_3); 3.73 ս (3H, OCH_3); 4.18 ս (2H, S-CH_3); 6.13 ս (1H, CH-պիրազոլ); 8.01 դ և 8.34 դ (2H, CH=CH, *J*=9.9); Մասս-սպեկտր 319 (M+H): Գտնված է, %. N 26.25; S 10.24. $C_{13}H_{14}N_6O_2S$. Հաշված է, %. N 26.40; S 10.07:

8դ,ե միացությունների սինթեզը

0.01 *Մոլ* կծու կալիումին 15 *մլ* ԴՄՖԱ-ի միջավայրում 0 ^{0}C-ում ավելացնում են 0.01 *մոլ* **7** միացությունը, խառնում սենյակային ջերմաստիճանում 1*ժ* մինչև աղագոյացումը, ապա 0 ^{0}C-ում ավելացնում ֆենօքսիէթիլբրոմիդ կամ 3-քլորպենտան-2,4-դիոն: Ստացված խառնուրդը թողնում են սենյակային ջերմասիճանում 24 *ժ*, այնուհետև տաքացնում 40-45 ^{0}C 3-5 *ժ*: Լուծիչը հեռացնում են, նստվածքը մշակում ջրով, ֆիլտրում և չորացնում:

6-(3,5-Դիմեթիլ-1*H*-պիրազոլ-1-իլ)-3-((2-ֆենօքսիէթիլ)թիո)-[1,2,4]տրիազոլո-[4,3-*b*]պիրիդազին (8դ). Ելքը 2.1 *գ* (58%), հ.կ. 124-126 ^{0}C: ^{1}H ՄՄՌ սպեկտր, δ, մ.բ., *J* (*Հց*). 2.24 ս (3H, 3-CH_3); 2.73 ս (3H, 5-CH_3); 3.52 տ (2H, SCH_2, *J*=6.5); 4.37 տ (2H, OCH_2, *J*=6.5); 6.12 ս (1H, CH-պիրազոլ); 6.83-7.24 մ (5H, C_6H_5); 8.00 դ և 8.31 դ (2H, CH=CH, *J*=9.9): Գտնված է, %. N 23.14; S 8.89. $C_{18}H_{18}N_6OS$. Հաշված է, %. N 22.93; S 8.75:

3-((6-(3,5-Դիմեթիլ-1*H*-պիրազոլ-1-իլ)-[1,2,4]տրիազոլո[4,3-*b*]պիրիդազին-3--իլ)թիո)-պենտան-2,4-դիոն (8ե). Ելքը 2.1 *գ* (62%), հ.կ. 156-158 ^{0}C: ^{1}H ՄՄՌ սպեկտր, δ, մ.բ., *J* (*Հց*). 2.26 ս (3H, 3-CH_3); 2.45 ս (6H, 2xCH_3); 2.75 ս (3H, 5-CH_3); 6.14 ս (1H, CH--պիրազոլ); 8.01 դ և 8.34 դ (2H, CH=CH, *J*=9.9): Գտնված է, %. N 24.61; S 9.14. $C_{15}H_{16}N_6O_2S$. Հաշված է, %. N 24.40; S 9.31:

6-(3,5-Դիմեթիլ-1*H*-պիրազոլ-1-իլ)պիրիդազին-3(2*H*)-թիոն (10). 0.01 *Մոլ* (0.76 *գ*) թիոմիզանյութին 10 *մլ* չոր ացետոնի միջավայրում ավելացնում են 1 *մլ* աղաթթու և 0.01 *մոլ* (2.09 *գ*) **1** միացությունը: Ռեակցիոն խառնուրդը տաքացնում են 60-65 ^{0}C 5-6 *ժ*, ապա սառեցնում, նստվածքը ֆիլտրում, լվանում ացետոնով, չորացնում: Ստացված **9** միացությունը լուծում են 30 *մլ* ջրի մեջ, այնուհետև ավելացնում 0.02 *մոլ* KOH, առաջացած լուծույթը զգուշությամբ թթվեցնում HCl-ով, pH=4, գոյացած նստվածքը ֆիլտրում, չորացնում: Ելքը 1.6 *գ* (80%), հ.կ. 208-210 ^{0}C: ^{1}H ՄՄՌ սպեկտր, δ, մ.բ., *J* (*Հց*). 2.21 ս (3H, 3-CH_3); 2.54 ս (3H, 5-CH_3); 5.98 ս (1H, CH-պիրազոլ); 7.61 դ և 7.78 դ (2H, CH=CH, *J*=9.5); 14.41 ս (1H, NH): ^{13}C ՄՄՌ սպեկտր, δ, մ.բ., 13.02, 13.70, 109.31, 120.59, 140.47, 142.34, 147.43, 149.49, 177.78: Գտնված է, %. N 27.03; S 15.67. $C_9H_{10}N_4S$. Հաշված է, %. N 27.16; S 15.55:

3-(3,5-Դիմեթիլ-1*H*-պիրազոլ-1-իլ)-6-(մեթիլթիո)պիրիդազին (11ա). 0.01 *Մոլ* (0.06 *գ*) KOH-ին ավելացնում են 25-30 *մլ* ջուր և 0.01 *Մոլ* (2.06 *գ*) **10** միացությունը, ապա սենյակային ջերմաստիճանում խառնման պայմաններում կաթիլներով ավելացնում 0.011 *մոլ* դիմեթիլսուլֆատ: Ռեակցիոն խառնուրդը թողնում են այդ ջերմաստիճանում 24 *ժ*, ապա ավելացնում 10-15 *մլ* սառը ջուր և ստացվածը ֆիլտրում, չորացնում: Ելքը 1.9 *գ* (87%), հ.կ. 96-98 ^{0}C: ^{1}H ՄՄՌ սպեկտր, δ, մ.բ., *J* (*Հց*). 2.24 ս (3H, 3-CH_3); 2.70 ս և 2.71 ս (6H, S-CH_3 և 5-CH_3); 6.00 ս (1H, CH-պիրազոլ); 7.52 դ և 7.93 դ (2H, CH=CH, *J*=9.3): Գտնված է, %. N 25.27; S 14.38. $C_{10}H_{12}N_4S$. Հաշված է, %. N 25.43;
S 14.55:

2-((6-(3,5-Դիմեթիլ-1*H*-պիրազոլ-1-իլ)պիրիդազին-3-իլ)թիո)քացախաթթու (11բ).

0.01 *Մոլ* **10** միացության կալիումական աղին 10-15 *մլ* էթանոլի միջավայրում ավելացնում են 0.01 *մոլ* (0.95 *գ*) քլորքացախաթթու: Ռեակցիոն խառնուրդը եռացնում են

2 *ժ*, ապա էթանոլը հեռացնում, նստվածքին ավելացնում 15-20 *մլ* ջուր և ստացվածը ֆիլտրում, չորացնում: Ելքը 2.03 *գ* (77%), հ.կ. 128-130 ^{0}C: ^{1}H ՄՄՌ սպեկտր, δ, մ.բ., *J* (*Հց*). 2.23 ս (3H, 3-CH_3); 2.69 ս (3H, 5-CH_3); 4.06 ս (2H, SCH_2); 6.01 ս (1H, CH-պիրազոլ); 7.63 դ և 7.96 դ (2H, CH=CH, *J*=9.3); 12.10 լ.ս (1H, OH): Գտնված է, %. N 21.34; S 12.21. $C_{11}H_{12}N_4O_2S$. Հաշված է, %. N 21.20; S 12.13:

11գ-ե միացությունների սինթեզը

0.01 *Մոլ* **10** միացությանը ավելացնում են 30 *մլ* ԴՄՖԱ, 0.01 *մոլ* KOH, այնուհետև խառնման պայմաններում ավելացնում 0.01 *մոլ* NaI և 0.011 *մոլ* 2-քլորացետամիդ կամ 0.011 *մոլ* հալոգենքացախաթթվի էսթեր: Ռեակցիոն խառնուրդը տաքացնում են 50-55 ^{0}C 3 *ժ*: Լուծիչը մասամբ հեռացնում են, մնացորդը մշակում KOH-ի և $Na_2S_2O_3$-ի ջրային լուծույթով և ֆիլտրում:

2-((6-(3,5-Դիմեթիլ-1*H*-պիրազոլ-1-իլ)պիրիդազին-3-իլ)թիո)ացետամիդ (11գ). Ելքը 1.8 *գ* (70%), հ.կ. 128-130 ^{0}C: ^{1}H ՄՄՌ սպեկտր, δ, մ.բ., *J* (*Հց*). 2.23 ս (3H, 3-CH_3); 2.68 ս (3H, 5-CH_3); 3.96 ս (2H, SCH_2); 6.01 ս (1H, CH-պիրազոլ); 6.94 լ.ս և 7.37 լ.ս (2H, NH_2); 7.66 դ և 7.96 դ (2H, CH=CH, *J*=9.3): ^{13}C ՄՄՌ սպեկտր, δ, մ.բ., 13.07, 14.25, 109.19, 119.47, 127.57, 140.73, 147.43, 149.53, 154.10, 158.40, 168.44: Գտնված է, %. N 26.78; S 12.01. $C_{11}H_{13}N_5OS$. Հաշված է, %. N 26.60; S 12.18:

Մեթիլ 2-((6-(3,5-դիմեթիլ-1*H*-պիրազոլ-1-իլ)պիրիդազին-3-իլ)թիո)ացետատ (11դ). Ելքը 1.9 *գ* (70%), հ.կ. 139-140 ^{0}C: ^{1}H ՄՄՌ սպեկտր, δ, մ.բ., *J* (*Հց*). 2.22 ս (3H, 3-CH_3); 2.70 ս (3H, 5-CH_3); 3.74 ս (3H, OCH_3); 4.15 ս (2H, SCH_2); 6.01 ս (1H, CH-պիրազոլ); 7.63 դ և 7.98 դ (2H, CH=CH, *J*=9.3): Գտնված է, %. N 20.36; S 11.31. $C_{12}H_{14}N_4O_2S$. Հաշված է, %. N 20.13; S 11.52:

էթիլ 2-((6-(3,5-դիմեթիլ-1*H*-պիրազոլ-1-իլ)պիրիդազին-3-իլ)թիո)ացետատ (11ե).

Ելքը 2.5 *գ* (86%), հ.կ. 115-117 ^{0}C: ^{1}H ՄՄՌ սպեկտր, δ, մ.բ., *J* (*Հց*). 1.28 տ (3H, O$CH_2$$CH_3$, *J*=7.1); 2.23 ս (3H, 3-CH_3); 2.69 դ (3H, 5-CH_3, *J*=0.8); 4.11 ս (2H, SCH_2); 4.17 կ (2H, O$CH_2$$CH_3$, *J*=7.1); 6.01 կ (1H, CH-պիրազոլ, *J*=0.8); 7.64 դ և 7.98 դ (2H, CH=CH, *J*=9.2): ^{13}C ՄՄՌ սպեկտր, δ, մ.բ., 13.07, 13.70, 14.29, 60.57, 109.26, 119.44, 127.37,

140.84, 149.58, 154.20, 156.87, 167.38: Գտնված է, %. N 19.28; S 11.12. $C_{13}H_{16}N_4O_2S$. Հաշված է, %. N 19.16; S 10.97:

3-((6-(3,5-Դիմեթիլ-1*H*-պիրազոլ-1-իլ)պիրիդազին-3-իլ)թիո)պենտան-2,4-դիոն (11q). 0.01 *Մոլ* **10** միացության կալիումական աղին 10-15 *մլ* ԴՄՖԱ–ի միջավայրում 0 ^{0}C-ում ավելացնում են 0.011 *մոլ* (1.5 *գ*) 3-քլոր-պենտան-2,4-դիոն: Ռեակցիոն խառնուրդը խառնում են սենյակային ջերմաստիճանում 24 *ժ*: Այնուհետև լուծիչը մասամբ հեռացնում են, ավելացնում ջուր, ստացված նստվածքը ֆիլտրում, չորացնում:

Ելքը 2.4 *գ* (80%), հ.կ. 119-120 ^{0}C: ^{1}H ՄՄՌ սպեկտր, δ, մ.բ., *J* (*Հց*). 2.24 ս (3H, 3-CH_3); 2.33 ս (6H, 2xCH_3); 2.72 ս (3H, 5-CH_3); 6.02 կ (1H, CH-պիրազոլ, *J*=0.8); 7.58 դ և 7.98 դ (2H, CH=CH, *J*=9.2); 17.4 ս (0.8H, OH-ենոլ): Գտնված է, %. N 18.34; S 10.47. $C_{14}H_{16}N_4O_2S$. Հաշված է, %. N 18.41; S 10.53:

3-((2-Քլոր-6-մեթիլպիրիմիդին-4-իլ)թիո)-6-(3,5-դիմեթիլ-1*H*-պիրազոլ-1-իլ)-պիրիդազին (12). 0.01 *Մոլ* **10** միացության կալիումական աղին 15 *մլ* ԴՄՖԱ-ի միջավայրում 0 ^{0}C-ում մաս-մաս ավելացնում են 0.01 *մոլ* (1.63 *գ*) 2,4-դիքլոր-6-մեթիլպիրիմիդին: Ռեակցիոն խառնուրդը խառնում են 30 *րոպե* 0-5 ^{0}C, ապա 14 *ժ* 75-80 ^{0}C: Այնուհետև լուծիչը հեռացնում են, նստվածքը մշակում ջրով և ֆիլտրում: Ելքը 2.65 *գ* (80%), հ.կ. 170-172 ^{0}C: ^{1}H ՄՄՌ սպեկտր, δ, մ.բ., *J* (*Հց*). 2.27 ս (3H, 3-CH_3); 2.45 ս (3H, CH_3-պիրիմիդին); 2.78 ս (3H, 5-CH_3); 6.09 ս (1H, CH-պիրազոլ); 7.30 ս (1H, CH-պիրիմիդին); 8.03 դ և 8.23 դ (2H, CH=CH, *J*=9.2): ^{13}C ՄՄՌ սպեկտր, δ, մ.բ., 13.14, 14.68, 23.06, 110.12, 116.41, 119.85, 134.26, 141.69, 150.56, 153.12, 155.62, 159.20, 169.50; Մասս սպեկտր 333 (100%) (M+H) և 335 (30%) (M+H): Գտնված է, %. Cl 10.75; N 25.38; S 9.73. $C_{14}H_{13}N_6ClS$. Հաշված է, %. Cl 10.65; N 25.25; S 9.63:

